

2026

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՓՈՐՁ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի (NDF) ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի տեսակետը:

Փաստաթուղթը պատրաստել են «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի ազգային փորձագետներ Սյուզաննա Սողոմոնյանը և Մարիամ Ջաղոյանը՝ ծրագրի միջազգային փորձագետներ Իգոր Բոտանի և Պոլինա Պանաիևտեի (ADEPT Association, Moldova) փորձագիտական ներդրմամբ և աջակցությամբ:

Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10

3.1. Սեմինարների տվյալների համադրված պատկերը 10

3.2. Հատող որակական միտումներ 11

3.3. ՔՀԿ-ների դերը ընտրական գործընթացներում. ներգրավվածության շարունակականության բացը 14

4. ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ 16

4.1. Հայեցակարգային շրջանակը. տեղեկատվության խաթարում և FIMI 16

4.2. Հայաստանի իրավական, ռազմավարական և ինստիտուցիոնալ շրջանակը 17

5. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ և ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ 20

5.1. Ընտրական բարեվարքության հայեցակարգային շրջանակը 20

5.2. ՀՀ ընտրական համակարգը և վերջին օրենսդրական նախաձեռնությունը (ՊԿ-1368) 21

5.3. Ընտրողների իրավունքների իրացումը մարզերում 24

5.4. ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն փոփոխությունների սահմանադրաիրավական, միջազգային և ընթացակարգային գնահատումը 25

5.5. Արտերկրում գտնվող քաղաքացիների քվեարկության բացը 27

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ. ՄՈԼԴՈՎԱՅԻ ԴԱՍԵՐԸ 29

6.1. ՔՀԿ-ների կոալիցիոն մոդելը (CALC) և ինստիտուցիոնալ երկխոսությունը 29

6.2. Ապատեղեկատվության չափման և արձագանքման մեթոդաբանական դասեր 31

6.3. Իրավական և ինստիտուցիոնալ դասեր 32

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 49

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 51

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն համառոտագիրն ամփոփում է Հայաստանի ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության վիճակի համապարփակ վերլուծությունը, ինչպես նաև Հայաստանում քաղաքացիական մասնակցության և ընտրական գործընթացներում ապատեղեկատվության ազդեցության վերաբերյալ ուսումնասիրության հիմնական արդյունքները՝ հիմնված «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի շրջանակում Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում 2026 թ. մայիսին անցկացված 16 համայնքային սեմինարների (251 մասնակից) տվյալների և 2026 թ. մայիս-հուլիսին տրամադրված 364 իրավաբանական խորհրդատվության արդյունքների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դիտարկումների, հայաստանյան իրավական և ինստիտուցիոնալ համատեքստի և ընտրական օրենսդրության ընթացիկ զարգացումների, միջազգային դիտորդական զեկույցների, ինչպես նաև Մոլդովայի Հանրապետության համադրելի փորձի հայ-մոլդովական համեմատական վերլուծության վրա:

Սույն համառոտագիրը ծրագրի ամփոփ քաղաքականության փաստաթուղթն է և կառուցված է երեք ուղղությամբ՝

1 **«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ»,**

2 **«ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ»**

3 **«ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ»**

Յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են հայաստանյան վերլուծությունը (3–5-րդ բաժիններ), Մոլդովայի համապատասխան փորձը (6-րդ բաժին) և առաջարկությունները (7-րդ բաժին):

Քաղաքացիական մասնակցության և տեղեկատվական դիմակայունության տեսանկյունից փաստաթուղթը վեր է հանում երեք փոխկապակցված դաշտ.

- ☑ սեմինարների տվյալները հուշում են, որ քաղաքացիական մասնակցության սահմանափակումները կարող են պայմանավորված լինել ոչ միայն անտարբերությամբ, այլև ինստիտուցիոնալ վստահության բացերով, մասնակցային մեխանիզմների մասին սահմանափակ իրազեկվածությամբ, երիտասարդների շրջանում մասնակցության ազդեցության նկատմամբ թերահավատությամբ և

խոցելի խմբերի (ինչպես օրինակ՝ Արցախից տեղահանված անձինք, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք) գործնական խոչընդոտներով, որոնք տարբեր մարզերում տարբեր դրսևորումներ ունեն.

- ☑ ընտրական ոլորտում ՔՀԿ-ների ակտիվությունը հիմնականում կենտրոնացած է ընտրական ցիկլի ակտիվ փուլերի վրա, մինչդեռ, ըստ ուսումնասիրված աղբյուրների, միջընտրական շրջանում նախաձեռնությունները հիմնականում կրում են ծրագրային և ոչ շարունակական բնույթ.

- ☑ մարզային սեմինարների մասնակիցների մի մասը հաղորդել է ապատեղեկատվության՝ իրենց որոշումների և մասնակցության վրա ընկալվող ազդեցության մասին, իսկ պետական արձագանքը, չնայած 2023 թ. հաստատված Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգին, դեռևս չունի միասնական համակարգող մարմին և ընտրական գործընթացներին հատուկ մշտադիտարկման մեթոդաբանություն։

Իրավական վերլուծությունը վեր է հանում չորս փոխկապակցված խնդրային դաշտ.

- **ընտրողների իրավունքների իրացման ընթացակարգային խոչընդոտներ մարզերում՝ հիմնարար իրավունքներից և ընտրացուցակներում տվյալների ստուգումից մինչև բողոքարկման կարգ.**
- **ընտրակաշառքի քողարկված ձևերի («բարեգործություն») և քվեարկության գաղտնիության ու անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ չլուծված իրավական մտահոգություններ.**
- **ընտրական օրենսդրության կայունության սկզբունքի հետ հնարավոր լարվածություն՝ պայմանավորված ընտրություններին և հանրաքվեին անմիջապես նախորդող, արագացված ընթացակարգով և սահմանափակ հանրային քննարկմամբ իրականացվող փոփոխություններով, որոնց թարմ օրինակը ընտրական իրավունքը նստակեցության ցենզով պայմանավորող Պ-1368 նախագծերի փաթեթն է.**
- **արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների մեծամասնության համար արտերկրից քվեարկելու ընդհանուր մեխանիզմի բացակայություն (գործող էլեկտրոնային քվեարկությունը հասանելի է միայն օրենքով սահմանված սահմանափակ կատեգորիաների համար)՝ ի հակադրություն տարածաշրջանային միտումների:**

Փաստաթուղթը ներառում է նաև ՀՀ ընտրական համակարգի գործող կարգավորումների նկարագրություն (5.2 ենթաբաժին), ինչպես նաև առանձին ներկայացնում է վերջին օրենսդրական նախաձեռնությունը (Պ-1368 և Պ-1368.1 նախագծերի փաթեթը), որն ընդունվել է 2026 թ. հուլիսի 3-ին համապատասխանաբար որպես ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն սահմանադրական օրենքներ: Երկու օրենքներն էլ պաշտոնապես հրապարակվել են 2026 թ. հուլիսի 24-ին և ուժի մեջ են մտել 2026 թ. օգոստոսի 25-ին: Մինչ այդ Ազգային ժողովի ընտրություններին ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը Հայաստանում

փաստացի գտնվելու նման նվազագույն ժամկետով պայմանավորված չէր, և հենց դա է այս փոփոխությունների հիմնական առարկան:

Մոլդովայի փորձը՝ Ազատ և արդար ընտրությունների կոալիցիայի (CALC) շրջանակում երկարաժամկետ համակարգման, անդամ կազմակերպությունների կողմից ընտրությունների դիտարկման, լրատվամիջոցների և սոցիալական մեդիայի մոնիթորինգի, ընտրողների իրազեկման և շահերի պաշտպանության ոլորտներում իրականացվող փոխլրացնող աշխատանքների, ինչպես նաև պետական մարմինների հետ կառուցակարգված երկխոսության միջոցով, հուշում է, որ ընտրական գործընթացի ամբողջականությունն ու հանրային վստահությունը կարող են ամրապնդվել երկարաժամկետ, համակարգված և բազմաշահակից համագործակցության արդյունքում: Միաժամանակ, այդ նույն փորձը՝ արտերկրի քվեարկության չափանիշահեն ընդլայնումից և ընտրական պաշտոնյաների վերապատրաստման մասնագիտացված կենտրոնից մինչև ամենամյա Ընտրական համաժողով և ԿԸՀ-ՔՀԿ ինստիտուցիոնալ համագործակցություն, հուշում է, որ ընտրական բարեվարքության մարտահրավերները կարող են արդյունավետորեն հասցեագրվել թիրախային գործիքներով և ներառական երկխոսությամբ, այլ ոչ թե ընտրողների շրջանակի կրճատմամբ: Համառոտագրի հիմնական եզրահանգումն այն է, որ Հայաստանի առաջնահերթ մարտահրավերը ոչ թե քաղաքացիական ակտիվության բացակայությունն է, այլ ընտրական ամբողջ պարբերաշրջանում մասնակցության, ընտրողների կրթության և տեղեկատվական դիմակայունության կայուն և ինստիտուցիոնալացված մեխանիզմների ձևավորումը:

Համառոտագրի առաջարկությունները խմբավորված են երեք ուղղություններով՝

- ☑ քաղաքացիական մասնակցություն՝ ընտրողների կրթության և հանրային իրազեկման բազմամյա ռազմավարություն, խոցելի խմբերի համար թիրախավորված գործիքներ և ՔՀԿ-ների շարունակական մասնակցության ինստիտուցիոնալացում,
- ☑ ապատեղեկատվություն և տեղեկատվական դիմակայունություն՝ ընտրական տեղեկատվական միջավայրի մշտադիտարկման մեթոդաբանություն և բազմաշահառու համագործակցության մշտական մեխանիզմ,
- ☑ իրավական շրջանակ և ընտրական իրավունքների իրացում՝ ընտրական և հանրաքվեի օրենսդրության կայունության ու մասնակցային փոփոխման ընթացակարգեր, ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն օրենքներով ներդրված փաստացի գտնվելու պահանջի ազդեցության և ընթացակարգային երաշխիքների գնահատում, արտերկրում գտնվող քաղաքացիների մասնակցության հնարավոր մեխանիզմների ուսումնասիրություն, ընտրական վարչարարության կարողությունների զարգացում և մարզային իրավական աջակցության ամրապնդում: Առաջարկները դիտարկվում են որպես ընտրական ամբողջ ցիկլն ընդգրկող փոխկապակցված միջոցառումների համալիր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2026 թ. հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին բարձր բևեռացված քաղաքական և տեղեկատվական միջավայրում, իսկ 2027 թ. ակնկալվում է սահմանադրական հանրաքվե: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերջնական զեկույցն արդեն արձանագրել էր բարձր քաղաքական բևեռացվածություն և բորբոքող հռետորաբանություն, ինչպես նաև ընտրություններին մոտ ժամկետներում ընտրական օրենսդրության փոփոխությունների հետևանքով իրավական անորոշության և ընտրողների իրազեկման համար սահմանափակ ժամանակի խնդիրները: 2026 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ նախնական եզրակացությունները ցույց են տալիս, որ մի շարք մարտահրավերներ պահպանել են արդիականությունը. ընտրությունները քաղաքացիներին ապահովել են քաղաքական այլընտրանքների իրական ընտրության հնարավորություն և ընդհանուր առմամբ պատշաճ կազմակերպված գործընթաց, սակայն քարոզարշավը եղել է խիստ առճակատվող և բևեռացված, առցանց միջավայրում արձանագրվել է կեղծ, մանիպուլյատիվ և ԱԲ-ով ստեղծված բովանդակության տարածում, իսկ դիտորդները մտահոգություններ են արձանագրել նաև քարոզարշավի հավասար հնարավորությունների և արտաքին միջամտության վերաբերյալ:

Թեև ընդունված է Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգը և 2024-2026 թթ. գործողությունների ծրագիրը, դրանց իրագործումը մարզային մակարդակում **մնում է թերի**:

Ծրագրի շրջանակում 2026 թ. մայիսին Հայաստանի չորս մարզերում (Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Տավուշ) տեղական ՔՀԿ-ների կողմից անցկացվել են 16 համայնքային սեմինար-քննարկումներ՝ ընտրական բարեվարքության, մեդիագրագիտության և քաղաքացիական մասնակցության թեմաներով, որոնց մասնակցել է 251 քաղաքացի: Ձուգահեռաբար ուսումնասիրվել է Մոլդովայի քաղաքացիական հասարակության փորձը 2024–2025 թթ. ընտրական ցիկլերի ընթացքում՝ որպես ապատեղեկատվական մարտահրավերների պայմաններում քաղաքացիական դիմակայունության և մասնակցության մեխանիզմների ձևավորման ու կիրառման օրինակ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ՀԱՄԱԴՐԵԼ ԹԻՐԱԽ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՎԵՐԼՈՒԾԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՓՈՐՁԻՑ ԲԽՈՂ ԴԱՍԵՐԸ՝ ԻՆՉՊԵՍ ՔՀԿ-ՆԵՐԻ ԿՈԱԼԻՑԻՈՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԱՍՈՎ, ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Աղբյուրային հենքը ներառում է.

1. **4 մարզային հաշվետվություն (16 սեմինար, 251 մասնակից)՝ քանակական հարցաշարերով (աշխարհագրական, տարիքային, սեռային բաշխում, քաղաքացիական և ընտրական փորձի ցուցանիշներ) և որակական քննարկումների ամփոփումներով.**

2. **ծրագրի ռեգիոնալ իրավական հաշվետվությունները չորս մարզից (2026 թ. հուլիս).**

3. **ՀՀ իրավական դաշտի վերլուծությունը**

4. **միջազգային չափանիշները (ՄԱԿ, ՄԻԵԴ, Վենետիկի հանձնաժողով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) և ընտրական բարեվարքության միջազգային ինդեքսները, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, International IDEA-ի, Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության (ԵԱԳԾ) և Եվրոպայի խորհրդի նյութեր.**

5. **Մոլդովայի Հանրապետության փորձը՝ CALC կոալիցիայի և դրա Քարտուղարության՝ Մասնակցային ժողովրդավարության ասոցիացիայի (ADEPT) փորձի ուսումնասիրության և փոխանակման, ADEPT ասոցիացիայի վերլուծական նյութերի, CALC կոալիցիայի 2025 թ. ընտրությունների գնահատականի և ծրագրի հայ-մոլդովական վերապատրաստման մոդուլների հիման վրա:**

Մոլդովան ընտրվել է որպես առավել վերաբերելի պրակտիկայի պատկերավոր դեպք՝ կառավարման ձևի (խորհրդարանական հանրապետություն), ընտրական համակարգի (ամբողջական համամասնական, 101 պատգամավոր, 5%/7% շեմեր) և ռեժիմի տիպի (Economist Intelligence Unit-ի Democracy Index 2024-ի համաձայն՝ Հայաստանը դասակարգվել է որպես «հիբրիդային ռեժիմ»՝ 5.35 միավորով, իսկ Մոլդովան՝ 5.86 միավորով) համադրելիության հիմքով: Մոլդովայի բաղադրիչը ներկայացվում է որպես համեմատական փորձի օրինակ, այլ ոչ թե որպես զուգահեռ փաստական տվյալների վրա հիմնված դեպք: Այն հիմնված է ինստիտուցիոնալ փորձի և երկրորդային աղբյուրների վրա և չի ներառում առաջնային տարածաշրջանային տվյալներ, որոնք համադրելի կլինեն Հայաստանում անցկացված սեմինարների շրջանակում հավաքագրված տվյալների հետ: Միաժամանակ, այս նմանությունները չեն չեզոքացնում երկու երկրների միջև սփյուռքի չափի և աշխարհագրության, պետական կարողությունների, անվտանգային միջավայրի, մեդիա շուկայի, ընտրական վարչարարության և քաղաքական ֆինանսավորման տարբերությունները, ուստի Մոլդովայի

փորձից բխող դասերը Հայաստանի համար պետք է դիտարկել որպես փոխանցելիության առանձին գնահատում պահանջող տարբերակներ, այլ ոչ թե նույն արդյունքի երաշխիք:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ: Մարզային տվյալները հավաքագրվել են ինքնակամ մասնակցության և հասանելիության սկզբունքով ձևավորված ընտրանքի միջոցով (մասնակիցները հրավիրվել են տեղական ՔՀԿ-ների կողմից կամ գրանցվել են իրենց նախաձեռնությամբ): Հետևաբար, 251 մասնակցի տվյալները վիճակագրորեն ներկայացուցչական չեն ո՛չ մարզերի բնակչության, ո՛չ էլ ՀՀ քաղաքացիների համար, չեն կարող տարածվել ողջ համայնքի կամ մարզի վրա և օգտագործվում են որպես նկարագրական (descriptive) տվյալներ՝ միտումների, մարտահրավերների և բարելավման ուղղությունների նախնական բացահայտման նպատակով: Քանի որ մասնակիցների զգալի մասն արդեն իսկ որոշակիորեն քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող անձինք են, առկա է հնարավոր դրական թեքում, և մարզերի բնակչության իրական պասիվության ու անվստահության մակարդակը կարող է ամբողջությամբ արտահայտված չլինել ներկայացված ցուցանիշներում: Ուստի արդյունքները ներկայացվում են որպես որակական ազդանշաններ և ուղղորդող միտումներ, այլ ոչ որպես վիճակագրորեն հաստատված համամարզային կամ համազգային պատկեր:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3.1. ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՏԿԵՐԸ

2026 թ. մայիսին չորս մարզերում անցկացված 16 սեմինարներին մասնակցել է 251 քաղաքացի (Գեղարքունիք՝ 64, Շիրակ՝ 63, Լոռի՝ 63, Տավուշ՝ 61): Ստորև ներկայացված ցուցանիշները վերաբերում են բացառապես սեմինարների մասնակիցներին:

Աղյուսակ 1. Քաղաքացիական և ընտրական ներգրավվածության փորձը («Այո» պատասխանների բաժինը)

ՑՈՒՑԻՉ	Նախկինում մասնակցել է նմանատիպ սեմինարի	Մասնակցել է համայնքային քննարկումների	Մասնակցել է ընտրություններին որպես դիտորդ, վստահված անձ կամ հանձնաժողովի անդամ	Ներգրավված է եղել ընտրական քաղաքացիական նախաձեռնություններում	Երբևէ դիմել է մարմիններին խոչընդոտ վերացնելու համար
Գեղարքունիք (64)	69% (44)	55% (35)	0% (0)	33% (21)	14% (9)
Շիրակ (63)	37% (23)	29% (18)	19% (12)	17% (11)	0% (0)
Լոռի (63)	44% (28)	14% (9)	14% (9)	6% (4)	2% (1)
Տավուշ (61)	18% (11)	10% (6)	2% (1)	2% (1)	0% (0)

Աղբյուր՝ 4 մարզային ՔՀԿ-ների հաշվետվություններ, 2026 թ.

Ցուցանիշները մի քանի ուշագրավ միտում են ցույց տալիս: Նախկին մասնակցային փորձը մարզերում խիստ անհավասար է. Գեղարքունիքում մասնակիցների 55%-ը մասնակցել է համայնքային քննարկումների, մինչդեռ Տավուշում՝ ընդամենը 10%-ը: Ընտրական գործընթացներում անմիջական ներգրավվածությունը (դիտորդ, վստահված անձ, հանձնաժողովի անդամ) բոլոր մարզերում ցածր է: Առավել հատկանշական է, որ պետական մարմիններին կամ պատասխանատու կառույցներին խոչընդոտների վերացման նպատակով դիմելու փորձը գրեթե բացակայում է (0%-ից 14%). անգամ սեմինարների՝ համեմատաբար ակտիվ մասնակիցների շրջանում ձևավորված մասնակցային փորձը միշտ չէ, որ վերածվում է ինստիտուցիոնալ պահանջատիրության գործելակերպի:

3.2. ՀԱՏՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Չորս մարզային հաշվետվությունների համեմատական վերլուծությունը բացահայտում է սեմինարների մասնակիցների դիտարկումներում կրկնվող հետևյալ օրինաչափությունները: Դրանք վերաբերում են ծրագրի շրջանակում հավաքված որակական տվյալներին և չեն կարող ինքնին ընդհանրացվել համապատասխան մարզերի ամբողջ բնակչության վրա:

1 **ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ ՆԱԽԿԻՆ ՓՈՐՁՆ Է, ՈՉ ԹԵ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ:** Բոլոր չորս մարզերում մասնակիցները ընտրական և պետական ինստիտուտների նկատմամբ անվստահությունը կապում են կոնկրետ բացասական փորձի հետ՝ չկատարված խոստումներ, հանձնառությունների ոչ ամբողջական իրականացում, թափանցիկության բացակայություն: Շիրակում սա ունի հատուկ պատմական համատեքստ. Գյումրիում 1988 թ. երկրաշարժից հետո տասնամյակներով կուտակված չկատարված հանձնառությունները ուղղակիորեն նշվում են որպես ինստիտուցիոնալ անվստահության առաջացման հիմք/աղբյուր:

2 **ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՉԸՆԴՈՏ Է, ԲԱՅՑ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ:** Գեղարքունիքում և Լոռիում սոցիալական ցանցերում տարածվող կեղծ լուրերն ու չստուգված տեղեկատվությունը դժվարացնում են հավաստի աղբյուրների տարբերակումը և ներկայացվել են որպես ընտրողների որոշումների վրա արդեն իսկ գործող ազդեցություն, ոչ թե վերացական ռիսկ: Շիրակում ապատեղեկատվությունը մասնակցությանը խոչընդոտող գործոնների շարքում նշվել է առաջին տեղում, և մասնակիցները դրա հետևանքով ստեղծված «շփոթը» կապել են ընտրություններից և հանրային գործընթացներից հեռու մնալու հետ: Տավուշում այն հիշատակվել է հիմնականում որպես ուսուցման ցանկալի թեմա, այլ ոչ թե արդեն նկատվող խնդիր:

3 **ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՉԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՑԱԾՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏ ՆՇՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԽՆԴԻՐ, ՍԱԿԱՅՆ ՆՇՎԱԾ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ**, ինչը որոշում է անհրաժեշտ միջամտության բնույթը: Այս դիտարկումը վերաբերում է ծրագրի շրջանակում հավաքված որակական տվյալներին և չի կարող ինքնին ընդհանրացվել համապատասխան մարզերի ամբողջ երիտասարդ բնակչության վրա: Գեղարքունիքում խնդիրը բովանդակային և հաղորդակցական բացթողումն է. նախընտրական ծրագրերում քիչ տեղ են զբաղեցնում կրթության, զբաղվածության, թվային հնարավորությունների և մարզային զարգացման թեմաները, իսկ թեկնածուները հազվադեպ են հաղորդակցվում երիտասարդներին հասկանալի ձևաչափերով, այսինքն՝ խնդիրը, հավանաբար, կարող է հասցեագրվել առաջարկի փոփոխությամբ: Շիրակում նշվում է մոտիվացիայի ընդհանուր պակաս՝ առանց կոնկրետ պատճառաբանության: Տավուշում երիտասարդները թերահավատ են քաղաքացիական ազդեցության նկատմամբ («*ձայնս ոչինչ չի փոխի*»), ինչը,

հավանաբար, ամենադժվար հասցեագրելի տարբերակն է, քանի որ կարող է պահանջել ոչ թե տեղեկատվության ավելացում, այլ իրական փորձի միջոցով վստահության վերականգնում: Լոռիում միավորվում են իրազեկվածության պակասն ու ազդեցության նկատմամբ թերահավատությունը, ընդ որում՝ տարեցները ևս նշվում են որպես նույնքան պասիվ խումբ, բայց այլ՝ գործնական հասանելիության պատճառով:

4 **ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՑԱԾՐ Է:** Գեղարքունիքում քաղաքացիների մեծ մասը տեղյակ է միայն քաղաքապետարան դիմելու կամ գրավոր դիմում ներկայացնելու հնարավորության մասին, բայց հանրային լսումների, մասնակցային բյուջետավորման, ավագանու աշխատանքի կամ հանրային վերահսկողության մեխանիզմների մասին իրազեկված չեն. խնդիրը գործիքների բացակայությունը չէ, այլ դրանց մասին տեղեկատվության չհասնելը քաղաքացուն: Տավուշում, հակառակը, մասնակցային բյուջետավորումն ու երիտասարդական խորհուրդը գործում են, բայց քիչ են կիրառվում մոտիվացիայի պակասի և թերահավատության պատճառով: Շիրակում և Լոռիում տրվել են ընդհանուր պատասխաններ («ոչ բավարար չափով»)՝ առանց կոնկրետ գործիքների նշման:


5 **ԽՈՑԵԼԻ ԵՆԹԱԽՄԲԵՐՆ ՈՒՆԵՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ, ՈՐՈՆՔ ԴՈՒՐՍ ԵՆ «ԱՆՑԱԲԵՐՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿԻՑ:** Գեղարքունիքում Արցախից տեղահանված անձինք բավարար չափով տեղեկացված չեն եղել ընտրական իրավունքի իրացման կոնկրետ ընթացակարգերի մասին (ինչպես և որ ժամկետներում գրանցվել, ինչ քայլեր ձեռնարկել՝ կապված տեղահանված կարգավիճակի հետ), ինչի հետևանքով որոշները ժամանակին չեն կարողացել մասնակցել ընտրություններին. սա տեղեկատվության հասցեատիրոջը հասնելու խնդիր է: Լոռիում տարեցների համար խոչընդոտներն են թվային գործիքներից օգտվելու դժվարությունը (երբ տեղեկատվությունը կամ գրանցումը հասանելի է միայն առցանց) և առողջական վիճակի ու տեղաշարժի սահմանափակումները:

6 **ԴՐԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆ Է ՏԱՎՈՒՇԸ**, որտեղ վերջին տարիներին ի հայտ են եկել նոր մասնակցային մեխանիզմներ, թեև դրանց օգտագործումը դեռ սահմանափակ է:

Տվյալների համադրությունը հուշում է, որ մասնակցության սահմանափակումները կարող են պայմանավորված լինել ոչ միայն անհատական մոտիվացիայով, այլև ինստիտուցիոնալ, հաղորդակցական և սոցիալական գործոններով և պահանջում են ոչ թե մեկ ընդհանուր իրազեկման մոտեցում, այլ տեղայնացված միջամտություններ: Մասնակիցների դիտարկումներով՝ հիմնական սահմանափակումը մասնակցության ենթակառուցվածքների,

վստահության և շարունակական ներգրավվածության մեխանիզմների թերզարգացածությունն է. հետևաբար քաղաքականությունները պետք է կենտրոնանան ոչ միայն իրազեկման, այլև քաղաքացիների և ինստիտուտների միջև երկարաժամկետ, վստահության վրա հիմնված կապերի ձևավորման վրա:

Աղյուսակ 2. Հատող որակական միտումներն ըստ մարզերի (ամփոփում)



Աղբյուր՝ 4 մարզային ՔՀԿ-ների հաշվետվություններ, 2026 թ.

3.3. ՔՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ. ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԸ

Հայաստանում ՔՀԿ-ները վերջին տասնամյակում դարձել են ընտրական գործընթացների կարևոր դերակատարներ՝ ընդգրկելով ընտրական գործընթացի գրեթե բոլոր փուլերը հետևյալ հիմնական ուղղություններով.

1 **ԴԻՏՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ՝** ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի պայմաններին բավարարող ՀԿ-ները (կանոնադրական նպատակներում առնվազն մեկ տարի ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանություն, քաղաքական չեզոքություն, հրապարակված տարեկան հաշվետվություն, ֆինանսավորման աղբյուրների բացահայտում) իրականացնում են երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն, հետևում են քարոզարշավին, քվեարկությանը և ձայների հաշվարկին, արձանագրում և հրապարակում են խախտումները:

2 **ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ՝** հանրային քննարկումներ, դասընթացներ, առցանց ուսուցում և սոցիալական մեդիայի արշավներ՝ հատուկ ուշադրությամբ երիտասարդներին, առաջին անգամ քվեարկողներին, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և մարզային բնակչությանը:

3 **ՄԵԴԻԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ և ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ՝** ուղղություն, որը դարձել է ՔՀԿ-ների աշխատանքի առավել տարածված ոլորտներից մեկը՝ սոցիալական մեդիայի և արհեստական բանականությամբ ստեղծվող մանիպուլյատիվ բովանդակության աճի պայմաններում:

4 **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ և ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝** առաջարկություններ, փորձագիտական կարծիքներ, մասնակցություն հանրային քննարկումներին. առաջարկների մի մասը ներառվել է օրենսդրական փաթեթներում:

5 **ՑԱՆՑԵՐ և ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐ՝** ռեսուրսների համատեղում և միասնական մեթոդաբանության կիրառում, այդ թվում՝ 2026 թ. խորհրդարանական ընտրությունների դիտարկման ժամանակ:



Այդուհանդերձ, ընտրական ոլորտում ՔՀԿ-ների ներգրավվածությունը մեծամասամբ կենտրոնացած է ընտրական ցիկլի ակտիվ փուլերի՝ ընտրություններին անմիջապես նախորդող և ընտրությունների ժամանակահատվածի վրա: Ըստ առկա ուսումնասիրված աղբյուրների՝ միջընտրական շրջանում ընտրողների շարունակական կրթության, մասնակցության խթանման, ապատեղեկատվության նկատմամբ դիմակայունության և բարեփոխումների շուրջ երկխոսության նախաձեռնությունների փաստագրված օրինակները սահմանափակ են, և նման նախաձեռնությունները հաճախ կախված են առանձին ծրագրերից ու ֆինանսավորումից, իսկ ինստիտուցիոնալացված համագործակցության մեխանիզմների վերաբերյալ փաստագրված տեղեկությունները սակավ են: Այսինքն՝ խնդիրը ներգրավվածության բացակայությունը չէ, այլ այն, որ այն դեռևս չի վերածվել ընտրական ամբողջ ցիկլն ընդգրկող շարունակական մոտեցման:

Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտի (International IDEA) ընտրական ցիկլի մոտեցումը (electoral cycle approach) շեշտում է, որ ընտրությունները «ոչ թե իրադարձություններ են, այլ գործընթացներ», և կայուն ժողովրդավարությունը պահանջում է ներգրավվածություն ընտրական փուլերի միջև ևս՝ ընտրողների կրթության, հանրային մասնակցության և ինստիտուտների նկատմամբ վստահության շարունակական զարգացմամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերջնական զեկույցը նույնպես առաջարկում է ընտրական օրենսդրության փոփոխությունները կատարել ընտրություններից բավարար ժամանակ առաջ, ապահովել բավարար ժամանակ ընտրողների կրթության համար և հանրային մեդիայի անաչառ լուսաբանման պահանջները տարածել ամբողջ ընտրական ցիկլի վրա: Ուստի Հայաստանի համար քաղաքականության կարևոր ուղղություն է ՔՀԿ-ների ներգրավվածության տեղափոխումը կարճաժամկետ ընտրական արձագանքներից դեպի շարունակական և համակարգված մոդել՝ ներառելով միջընտրական շրջանում ընտրողների կրթությունը, ապատեղեկատվության նկատմամբ դիմակայունության զարգացումը և տեղական մակարդակում մասնակցության խթանումը:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Հայեցակարգային շրջանակը. տեղեկատվության խաթարում և FIMI

«Կեղծ լուր» (fake news) հասկացության շուրջ քննարկումները հաճախ շփոթում են երեք տարբեր երևույթներ, որոնց տարբերակումը, ըստ Եվրոպայի խորհրդի **«Տեղեկատվական անկանոնություն»** շրջանակի, հիմնված է տեղեկատվության ճշգրտության և տարածողի մտադրության վրա (Աղյուսակ 3): Ապատեղեկատվությունը, ի տարբերություն կեղծ տեղեկատվության, դիտավորյալ գործողություն է, որը հաճախ կազմակերպված է և ավելի լայն տեղեկատվական ռազմավարության մաս է՝ ներառյալ տեղեկատվական պատերազմները, քարոզչական արշավներն ու ազդեցության գործողությունները:

Աղյուսակ 3. Տեղեկատվության խաթարման երեք դրսևորումները

	Սահմանումը	Նպատակը, մտադրությունը	Օրինակ
Կեղծ տեղեկատվություն (Misinformation)	Կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն, որը տարածվում է առանց դիտավորության վնաս պատճառելու կամ մոլորեցնելու	Ոչ դիտավորյալ տարածում՝ գիտելիքի պակասի, թարգմանության սխալի կամ աղբյուրի անճշտության պատճառով	Ոչ հավաստի հոդված տարածել՝ առանց դրա փաստերը ստուգելու
Ապատեղեկատվություն (Disinformation)	Կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն, որը դիտավորյալ ստեղծված է՝ մոլորեցնելու, ազդելու կամ շահեր առաջ մղելու նպատակով, հաճախ համակարգված արշավի շրջանակում	Մանիպուլյացիա, շահադիտական օգտագործում՝ քաղաքական, տնտեսական կամ գաղափարական նպատակներով	Կեղծ լուր տարածել գործչի մասին՝ նրա բարի համբավը վնասելու նպատակով
Իրականության չարամիտ տարածում (Malinformation)	Իրական տեղեկություն, որը դիտավորյալ օգտագործվում է վնասելու համար՝ համատեքստից դուրս ներկայացնելով կամ հրապարակելով անձնական կամ գաղտնի տվյալներ	Դիտավորյալ հրապարակում՝ անձին, կազմակերպությանը կամ երկրին վնաս հասցնելու նպատակով	Գաղտնի նամակների կամ անձնական տվյալների արտահոսք՝ վարկաբեկման նպատակով

Աղբյուր՝ Եվրոպայի խորհուրդ, DGI(2017)09:

Եվրոպական արտաքին գործողությունների ծառայությունը (ԵԱԳԾ) վերջին տասնամյակում մշակել է արտաքին տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության (Foreign Information Manipulation and Interference, FIMI) հայեցակարգը և դրան արձագանքելու «FIMI Toolbox» գործիքակազմը: Ըստ ԵԱԳԾ սահմանման՝ FIMI-ն վարքագծի մոդել է, որը պարտադիր չէ, որ անօրինական լինի, սակայն սպառնում է կամ կարող է բացասաբար ազդել ժողովրդավարական արժեքների, ընթացակարգերի և քաղաքական գործընթացների վրա և իրականացվում է դիտավորյալ ու համակարգված կերպով՝ պետական կամ ոչ պետական դերակատարների և նրանց աջակիցների կողմից՝ երկրի ներսում և դրանից դուրս: FIMI-ն և ապատեղեկատվությունը համընկնող, բայց ոչ նույնական կատեգորիաներ են. FIMI գործողությունները կարող են օգտագործել ապատեղեկատվություն, սակայն FIMI-ի

գնահատումը լրացուցիչ ուշադրություն է դարձնում դերակատարներին, համակարգմանը, վարքագծին և միջամտության եղանակներին, այդ թվում՝ մանիպուլյացիայի բազմազան տեխնիկաներին, լրատվամիջոցների և թվային հարթակների համակարգված օգտագործմանը և երկարաժամկետ ռազմավարական մոտեցմանը: Այս տարբերակումը կարևոր է նաև մշտադիտարկման համար, քանի որ կեղծ բովանդակության հայտնաբերումը և համակարգված FIMI գործողության նույնականացումը տարբեր հետազոտական խնդիրներ են:

4.2. Հայաստանի իրավական, ռազմավարական և ինստիտուցիոնալ շրջանակը

Հայաստանում, ինչպես բազմաթիվ երկրներում, առցանց մեդիայի և սոցիալական ցանցերի զարգացումը զգալիորեն ընդլայնել է կեղծ և մոլորեցնող բովանդակության տարածման արագությունն ու ազդեցության շրջանակը, իսկ տեղեկատվական միջավայրի բևեռացումը և մեդիա սպառման փոփոխվող վարքագիծը լրացուցիչ պայմաններ են ստեղծում ապատեղեկատվության ազդեցության մեծացման համար: Կառավարության նախաձեռնությունները երկար ժամանակ կրել են հատվածական բնույթ, և բացակայել է ապատեղեկատվության բացահայտման, վերլուծության և հակազդման հստակ ինստիտուցիոնալ համակարգ՝ համապատասխան լիազորություններով և պատասխանատվության բաշխմամբ: ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի գործառույթները վերաբերում են հանրային և ռազմավարական հաղորդակցությանը և տեղեկատվական անվտանգության որոշ հարցերի, սակայն այն ապատեղեկատվության դեմ պայքարի անկախ կամ միջգերատեսչական համակարգող մարմին չէ: Այս պայմաններում հակազդման կարևոր դեր են ստանձնել ՔՀԿ-ները և անկախ մեդիան՝ ապատեղեկատվության բացահայտման, մեդիագրագիտության և հանրային իրազեկման ծրագրերով:

Իրավական և քաղաքական շրջանակը ձևավորվել է մի քանի քայլով.

1 **ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (2020)** տեղեկատվական անվտանգությունը դիտարկում է որպես ազգային անվտանգության բաղադրիչ, նշում է օտարերկրյա դերակատարների կիբերհարձակումների և տեղեկատվական ազդեցության գործողությունների սպառնալիքը և նախատեսում հանրային իրազեկվածության ու մեդիագրագիտության բարձրացում, սակայն երկար ժամանակ չի ուղեկցվել հստակ ինստիտուցիոնալ մեխանիզմներով և գործողությունների ծրագրով:

2 **«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ (2020)** նախատեսում է հեռարձակողների թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմներ, իսկ լիցենզավորման մրցույթներին մասնակցող հեռարձակողների համար ներդրվել են էթիկայի կանոններ և ինքնակարգավորման մեխանիզմներ: Դրանց գործնական արդյունավետության գնահատականները միանշանակ չեն, և շարունակում են պահպանվել մեդիա սեփականության, ֆինանսավորման աղբյուրների և լրատվամիջոցների ու քաղաքական դերակատարների հնարավոր կապերի թափանցիկության խնդիրները:

3 **2021 Թ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ** վիրավորանքի և զրպարտության համար փոխհատուցման առավելագույն չափերը բարձրացվեցին համապատասխանաբար մինչև 3 և 6 միլիոն դրամ, ինչը լրագրողական և կազմակերպությունների կողմից քննադատվեց՝ որպես խոսքի ազատության սահմանափակման և լրագրողների վրա ճնշման ռիսկ:

4 **ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ 2024-2026 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ** (ՀՀ վարչապետի 2023 թ. դեկտեմբերի 27-ի N 1319-Լ որոշում) առավել համակարգված մոտեցման ձևավորման կարևոր քայլ են՝ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և մեդիայի ներգրավմամբ: Հայեցակարգի հիմնական ուղղություններն են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, համագործակցության մեխանիզմները, իրավական դաշտի կատարելագործումը, հանրային կրթությունն ու մեդիագրագիտությունը (հատկապես երիտասարդների և տեղեկատվական խոցելի խմբերի շրջանում) և տեխնոլոգիական մոնիտորինգի գործիքները:

Հայեցակարգի արդյունավետ իրականացումը կախված է պատասխանատու մարմինների դերերի հստակեցումից, միջգերատեսչական համագործակցության գործնական մեխանիզմներից և ՔՀԿ-ների ու անկախ մեդիայի շարունակական ներգրավումից: Այս տեսանկյունից հիմնական բացերը շարունակում են մնալ.

1 **հատուկ լիազորություններով օժտված միասնական համակարգող մարմնի բացակայությունը,**

2 **պետական կառույցների միջև համակարգման սահմանափակ մեխանիզմները,**


3 **մեդիագրագիտության անհավասար մակարդակը տարբեր սոցիալական խմբերի շրջանում,**

4 **մեդիա սեփականության ու ֆինանսավորման թափանցիկության խնդիրները:**

ԲԱՑԻ ԱՅԴ, ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԿՐԵԼ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆՈՒՅԹ, ՄԻՆՉԴԵՌ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ և ԼՈՌՈՒ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ (ՏԵՍ 3.2) ՀԱՂՈՐԴԵԼ Է ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԸՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2026 թ. հունիսի 8-ի նախնական եզրակացությունների համաձայն՝ առցանց քարոզարշավում արձանագրվել է արհեստական բանականությամբ ստեղծված մանիպուլյատիվ բովանդակության օգտագործում, ինչպես նաև ոչ իսկական հաշիվներով կառավարության և

ընտրական գործընթացի վարկաբեկմանն ուղղված կեղծ և մանիպուլյատիվ բովանդակության տարածում: ԺՀՄԻԳ-ը նաև վկայակոչել է փաստերի ստուգմամբ զբաղվող կազմակերպությունների արձանագրած՝ արտերկրից ծագող համակարգված ապատեղեկատվական գործողությունների աճը: Միաժամանակ իշխանությունների հակազդման քայլերի թափանցիկության և արդյունավետության գնահատումը սահմանափակվել է հայտնաբերված դեպքերի և ձեռնարկված գործողությունների վերաբերյալ հրապարակային տեղեկատվության պակասով:



Խնդիրը դրսևորվում է նաև իրավական հարթությունում: Մարզային իրավաբանական խորհրդատվությունների ընթացքում, մասնավորապես Գեղարքունիքի մարզում, արձանագրվել են կրկնվող դիմումներ թեկնածուներին վերաբերող տեսանյութերի իսկությունը և դրանց՝ արհեստական բանականությամբ ստեղծված կամ մանիպուլացված (deepfake) լինելու հնարավորությունը պարզելու նպատակով (միայն Սևանում՝ 12 շահառու): Նման դեպքերը բարձրացնում են անձի պատվի և արժանապատվության պաշտպանության, ընտրական քարոզչության իսկության, հնարավոր զրպարտության, ինչպես նաև ԱԲ-ով ստեղծված կամ փոփոխված քաղաքական բովանդակության նույնականացման և թափանցիկության հարցեր:

Այս համատեքստում առցանց նախընտրական քարոզչության և ԱԲ-ով ստեղծված կամ փոփոխված քաղաքական բովանդակության վերաբերյալ հստակ իրավական և գործնական երաշխիքների բացը հատկապես արդիական է 2027 թ. ակնկալվող հանրաքվեին ընդառաջ: Հետևաբար նպատակահարմար է դիտարկել նման բովանդակության թափանցիկության ապահովման միջոցներ, այդ թվում՝ համապատասխան դեպքերում դրա ԱԲ-ով ստեղծված կամ փոփոխված լինելու հստակ մակնշման պահանջներ:

5.1. Ընտրական բարեվարքության հայեցակարգային շրջանակը

Ընտրական բարեվարքությունը, ըստ ACE ընտրական գիտելիքի ցանցի (ACE Electoral Knowledge Network) և «Ընտրական բարեվարքության նախագծի (Electoral Integrity Project, EIP), ենթադրում է ոչ միայն քվեարկության օրվա անխափանություն, այլև ամբողջ ընտրական ցիկլի՝ օրենսդրությունից մինչև արդյունքների ամփոփում, համապատասխանություն վեց ուղենիշային սկզբունքների. ընտրական ժողովրդավարության սկզբունքների հարգում, էթիկական վարքագիծ, պրոֆեսիոնալիզմ և ճշգրտություն, ինստիտուցիոնալ երաշխիքներ, այդ թվում՝ զսպումների և հակակշիռների մեխանիզմներ, վերահսկողություն և իրավակիրառում, թափանցիկություն և հաշվետվողականություն: WEIP-ի չորս սկզբունքները՝ մրցակցություն, մասնակցություն, տեղեկացված հանրային քննարկում և բանավեճ, և իրավական վեճերի արդյունավետ լուծում, միավորվում են քաղաքացիների կարողունակացման կենտրոնական գաղափարի շուրջ:

Այս շրջանակում ընտրողների լայն և հավասար մասնակցությունը բարեվարքության ոչ թե ածանցյալ, այլ հիմնարար բաղադրիչ է. ընտրական բարեվարքության բարձրացմանն ուղղված միջոցները պետք է հավասարակշռվեն համընդհանուր ընտրական իրավունքի և համաչափության պահանջների հետ, իսկ ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է՝

- ☑ **ունենա օրենքով սահմանված հիմք,**
- ☑ **հետապնդի իրավաչափ նպատակ**
- ☑ **համապատասխանի օբյեկտիվության, ողջամտության, ոչ խտրականության և համաչափության պահանջներին**

Ընտրական բարեվարքության ընկալումների ինդեքսի (Perceptions of Electoral Integrity, PEI) տվյալների համաձայն՝ Հայաստանի 2021 թվականի խորհրդարանական ընտրությունները ընտրական ցիկլի մի շարք փուլերով ստացել են համեմատաբար բարձր գնահատականներ: PEI 11.0 տվյալների համաձայն՝ Հայաստանի ընտրական բարեվարքության ընդհանուր ցուցանիշը կազմել է 67 միավոր՝ 100 հնարավորից: Այս արդյունքները, ինչպես նաև միջազգային դիտորդական առաքելությունների գնահատականները, վկայում են 2018 թվականից Հայաստանի ընտրական գործընթացներում արձանագրված դրական զարգացումների մասին: Միաժամանակ, 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդների նախնական եզրակացությունները ցույց են տալիս, որ ընտրական բարեվարքության ամրապնդումը շարունակում է պահանջել ինստիտուցիոնալ հետևողական բարեփոխումներ, մասնավորապես՝ ընտրական մրցակցության հավասար պայմանների, քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկության, ընտրողների տեղեկացված մասնակցության և վերահսկողական մեխանիզմների արդյունավետության ուղղություններով:

5.2. ՀՀ ընտրական համակարգը և վերջին օրենսդրական նախաձեռնությունը (Պ-1368)

Ազգային ժողովի ընտրությունները կարգավորվում են 1995 թ. Սահմանադրությամբ (վերջին անգամ փոփոխված 2015 թ. հանրաքվեով), 2016 թ. ընդունված «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Կուսակցությունների մասին», «Հավաքների ազատության մասին» օրենքներով և հարակից օրենսգրքերով: Հայաստանը կողմ է ժողովրդավարական ընտրություններին առնչվող հիմնական միջազգային պայմանագրերին (ՄԻԵԿ և դրա թիվ 1 արձանագրություն, ՔՔԻՄԴ և այլն) և անդամակցում է Վենետիկի հանձնաժողովին ու ԳՐԵԿՈ-ին: Ստորև ներկայացվում է ընտրական համակարգի գործող կարգավորումների նկարագրությունը: Այս նկարագրությունն արտացոլում է կարգավորումները մինչև ՀՕ-361-Ն սահմանադրական օրենքով կատարված փոփոխությունները, որոնք ներկայացված են ստորև՝ առանձին:

1 ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ազգային ժողովի ընտրություններին ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները (Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մաս): Ընտրելու իրավունք չունեն միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար դատապարտված և պատիժը կրող անձինք: ԱԺ ընտրություններին մասնակցելու համար բնակության կամ երկրում փաստացի գտնվելու որևէ ժամկետի պահանջ (նստակեցության ցենզ) գործող օրենսգրքով նախատեսված չէ. նստակեցության (հաշվառման) պահանջ գործում է բացառապես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար (2-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերով բարենպաստ գործելակերպի կանոնագրքին համապատասխան: Ընտրողների գրանցումը պասիվ է. ցուցակը կազմվում է Բնակչության պետական ռեգիստրի հիման վրա, և ընտրության օրը ընտրողի ինքնականությունը հաստատվում է ընտրողների նույնականացման սարքերով (ԸՆՍ), ինչը զգալիորեն նվազեցնում է կրկնակի ու փոխանորդ քվեարկության ռիսկը:

ԸՆՏՐՎԵԼՈՒ (ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԴԱՌՆԱԼՈՒ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ 83-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ԱՌԱՆՁԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿԱՐՈՂ Է ԸՆՏՐՎԵԼ ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԻՆ ԼՐԱՑԱԾ, ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՀՀ-ՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ, ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ: ԸՆԴ ՈՐՈՒՄ, ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՎ ԹԵԿՆԱԾՈՒ ԳՐԱՆՑՎԵԼՈՒՆ ՆԱԽՈՐԴՈՂ 1461 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌՆՎԱԶՆ 731 ՕՐ ԲԱՑԱԿԱՅԵԼ Է ՀՀ-ԻՑ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԵՐԿՐԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ: ԱՅՍ ՆՍՏԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՄԻԱՅՆ ԸՆՏՐՎԵԼՈՒ (PASSIVE), ՈՉ ԹԵ ԸՆՏՐԵԼՈՒ (ACTIVE) ԻՐԱՎՈՒՆՔԻՆ:

2 ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ընտրողն ընտրում է առնվազն 101 պատգամավոր՝ հնգամյա ժամկետով, մեկ համապետական ընտրատարածքում՝ փակ համամասնական ցուցակի համակարգով: Խորհրդարանում մանդատներ ստանալու համար կուսակցությունները պետք է հաղթահարեն 4 տոկոս, մինչև երեք կուսակցությունից կազմված դաշինքները՝ 8 տոկոս, իսկ 4 և ավելի կուսակցությունից կազմված դաշինքները՝ 10 տոկոս արգելապատնեշը, որը հաշվարկվում է կողմ քվեարկված քվեաթերթիկների և անճշտությունների թվի գումարից (95-րդ հոդված): Եթե արգելապատնեշը հաղթահարել է 3-ից պակաս ուժ, մանդատների բաշխմանը մասնակցում են արգելապատնեշին առավել մոտ արդյունք ցույց տված 3 քաղաքական ուժերը՝ ապահովելով խորհրդարանական բազմակարծությունը: Մանդատները բաշխվում են ստացած ձայներին համամասնորեն, իսկ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին բաշխվում է 4 մանդատ (եզդիներ, ռուսներ, ասորիներ, քրդեր)՝ վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ չորս համայնքներից յուրաքանչյուրին մեկական: Ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկվում է 80-ից 300 թեկնածու, և յուրաքանչյուր սեռի ներկայացվածությունը չի կարող գերազանցել 70 տոկոսը (այսինքն՝ առնվազն 30 տոկոս գենդերային քվոտա):

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ: ԵԹԵ ՀԱՂԹՈՂ ՈՒԺԸ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ԲԱՇԽՎԱԾ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է, ԲԱՅՑ 52 ՏՈԿՈՍԻՑ ՊԱԿԱՍ, ՆՐԱՆ ՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՅՆՔԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԹՎՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՆԴԱՏ, ՈՐ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԼԻՆԻ ԱՌՆՎԱԶՆ 52 ՏՈԿՈՍ (96-ՐԴ ՀՈԴՎԱԾ): ԵԹԵ ՈՉ ՄԻ ՈՒԺ ՉԻ ՍՏԱՆՈՒՄ ԱՅԴ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿՈԱԼԻՑԻԱ ՉԻ ՁԵԱՎՈՐՎՈՒՄ, ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 35-ՐԴ ՕՐԸ, ԵՐԿՈՒ ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒԺԵՐԻ ՄԻՋԵՒ, ՈՐՈՆՑ ՇՈՒՐՋ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՎԱՎՈՐՎԵԼ ՆՈՐ ԴԱՇԻՆՔՆԵՐ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՇՈՒՐՋ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ (98-ՐԴ ՀՈԴՎԱԾ):

3 2026 Թ. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀՕ-361-Ն ԵՎ ՀՕ-362-Ն)

2026 թ. հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից շրջանառության մեջ է դրվել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Պ-1368 նախագիծը (հուլիսի 1-ին՝ լրամշակված տարբերակ) և դրան կից «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-1368.1 նախագիծը: Ազգային ժողովը երկու նախագծերն էլ ընդունել է 2026 թ. հուլիսի 3-ին՝ համապատասխանաբար որպես ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն սահմանադրական օրենքներ: Հանրապետության նախագահը երկու օրենքներն էլ ստորագրել է

հուլիսի 23-ին, դրանք պաշտոնապես հրապարակվել են հուլիսի 24-ին և ուժի մեջ են մտել 2026 թ. օգոստոսի 25-ին:

Ընդունված փոփոխությունների բովանդակությունը հետևյալն է. ՀՕ-361-Ն օրենքի 1-ին հոդվածով Ազգային ժողովի ընտրություններում ընտրելու իրավունքը պայմանավորվել է քվեարկության օրվան նախորդող 48-րդ (արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ) օրվա դրությամբ դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանում փաստացի 366 և ավելի օր գտնվելու պահանջով (նախնական տարբերակով առաջարկվում էր 365 օրվա ընթացքում առնվազն 183 օր): Բացառություն է նախատեսվում հանրային ծառայության ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու, դիվանագիտական ծառայություն անցնող անձի ընտանիքի անդամի՝ նրա հետ արտերկրում բնակվելու և արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության դեպքերի համար: ՀՕ-362-Ն օրենքով նույն՝ 730 օրվա ընթացքում առնվազն 366 օր փաստացի գտնվելու պահանջը և նույն բացառությունները տարածվել են նաև հանրաքվեին մասնակցելու իրավունքի վրա՝ հանրաքվեի օրվան նախորդող 48-րդ, իսկ նոր քվեարկության դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ: ՀՕ-361-Ն օրենքով փաստացի գտնվելու պահանջը տարածվել է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վրա՝ համայնքում հաշվառման պահանջին զուգահեռ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ընտրողների նկատմամբ (Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս): Ընտրողների ցուցակները ձևավորվում են Ընտրողների ռեգիստրի և Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի փոխգործելիության արդյունքում (9-րդ հոդվածի 4-րդ մասի և 14-րդ հոդվածի 2-րդ մասի լրացումներ):

ՀՕ-361-Ն ԵՎ ՀՕ-362-Ն ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԲԱՎԱԿԱՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 5.4 ԵՆԹԱԲԱԺՆՈՒՄ, ԻՍԿ ԴՐԱՆՑԻՑ ԲԽՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ 7.3 ԵՆԹԱԲԱԺՆՈՒՄ:

4 ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հայաստանում ընտրական հանձնաժողովի անդամների մասնագիտական պատրաստման գործող համակարգը կազմակերպվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: ԿԸՀ-ի 2022 թ. հունիսի 30-ի թիվ 50-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում՝ տարին առնվազն մեկ անգամ, և ուղղված են տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանց ընտրական օրենսդրության ուսուցմանը, գիտելիքների ստուգմանը և որակավորման շնորհմանը: Ստուգարքը հաջողությամբ հանձնած անձանց տրվող որակավորման վկայականն ուժի մեջ է երեք տարի: ԿԸՀ-ն իրականացնում է նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստումներ:

ԱՅՍՊԻՍՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՍԱԿԱՅՆ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ԱՆՄԻՋԱՊԵՍ ԿԸՀ-Ի ԿՈՂՄԻՑ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ՄՈՂՈՎԱՅԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ (CICDE) ՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՄՇՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ: ՄՈՂՈՎԱՅԻ ՄՈԴԵԼԸ, ՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՍՈՒՅՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԻ 6.3 ԵՆԹԱԲԱԺՆՈՒՄ, ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՈՒ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ԱՌԱՆՁԻՆ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ԾՐՋԱՆԱԿՈՒՄ:

5.3. Ընտրողների իրավունքների իրացումը մարզերում

Ծրագրի շրջանակում 2026 թ. մայիս-հուլիս ամիսներին Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում անցկացվել է 16 համայնքային սեսիա (251 մասնակից), և ռեգիոնալ իրավաբանների ու տարածաշրջանային իրավական ղեկավարների կողմից տրամադրվել է 364 համակարգված իրավաբանական խորհրդատվություն: Խորհրդատվությունների տվյալները ծառայությունից օգտվելու դեպքերի վարչական տվյալներ են և չեն գնահատում համապատասխան խնդիրների տարածվածությունը մարզի բնակչության շրջանում: Ստորև ներկայացվում են համախառն ցուցանիշները:

Աղյուսակ 4. Համայնքային սեսիաներ, մասնակիցներ և իրավաբանական խորհրդատվություններ՝ ըստ մարզերի





Մարզ	Սեսիաներ	Մասնակիցներ	Խորհրդատվություններ	Կին / տղամարդ շահառուներ
Գեղարքունիք	4	64	90	63 / 27
Լոռի	4	63	104	71 / 33
Շիրակ	4	63	85	67 / 18
Տավուշ	4	61	85	41 / 44
Ընդամենը	**16**	**251**	**364**	**242 / 122**





Խորհրդատվությունների մեծ մասը բոլոր մարզերում վերաբերել է ամենատարրական հարցերին. ընտրողի հիմնարար իրավունքներ, քվեարկության ընթացակարգ, ընտրողների ցուցակներում սեփական տվյալների ստուգում (elections.am), բողոքարկման կարգ ու ժամկետներ: Լոռիում միայն այս խմբի հարցերը բարձրացրել է շուրջ 50 շահառու, Գեղարքունիքում առաջին անգամ քվեարկողների իրավունքների վերաբերյալ գրանցվել է 52 դիմում, Սևանում ընտրացուցակներում սեփական տվյալները գտնելու հարց է բարձրացրել 15 շահառու: Ռեգիոնալ իրավաբանների գնահատմամբ՝ դիմած շահառուների հարցերի հիմնական աղբյուրը ոչ թե օրենսդրական բացերն են, այլ իրազեկվածության պակասը, որը հատկապես սուր է թվային գործիքներից սահմանափակ օգտվող խմբերի (տարեցներ, գյուղական համայնքներ) շրջանում: Սա ուղղակիորեն համընկնում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի՝ ընտրողների կրթության ուժեղացման կայուն հանձնարարականի հետ:

1 ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԻ ՔՈՂԱՐԿՎԱԾ ՁԱՅԸ և ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԸ

Շիրակի մարզում համայնքային հանդիպումների ընթացքում առնվազն 10 դեպքում բարձրացվել է նախընտրական շրջանում կատարվող «բարեգործությունների» հարցը՝ որպես ընտրողի կամքի ուղղորդման գործիք. իրավաբանները պարզաբանել են ընտրակաշառքի համար նախատեսված պատասխանատվությունը, սակայն արձանագրել են, որ բարեգործության և ընտրակաշառքի իրավական սահմանազատումը հանրության համար մնում է անորոշ, իսկ խնդիրը՝ համակարգային: Գեղարքունիքում վերհանվել են նաև վարչական ռեսուրսի օգտագործմանն առնչվող հարցեր: Այս առումով վերաբերելի է նաև Մոլդովայի փորձը (տե՛ս 6.3):

2 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ և ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոռու և Շիրակի մարզերում շահառուները (Շիրակում՝ առնվազն 7 կրկնվող դեպք) մտահոգություններ են հայտնել քվեարկության գաղտնիության, «իմ փոխարեն ուրիշը կքվեարկի՞» և «իմ ընտրությունը կիրապարակվի՞» հարցադրումներով, ինչպես նաև ստորագրված ընտրացուցակների հրապարակման և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ: Թեև ընտրողների էլեկտրոնային նույնականացման սարքերը (ներդրված 2017 թ.) զգալիորեն նվազեցնում են կրկնակի կամ այլ անձի փոխարեն քվեարկության ռիսկը և ուժեղացնում ընտրողի ինքնության ստուգման մեխանիզմը, հանրային ընկալման մակարդակում այդ երաշխիքները չեն յուրացվել, ինչը կարող է սնուցել ինչպես անվստահությունը, այնպես էլ մանիպուլյացիաների նկատմամբ խոցելիությունը: Առանձին ռիսկային դաշտ է ձևավորում Պ-1368 նախագծով առաջարկված և ՀՕ-361-Ն օրենքով ամրագրված՝ Ընտրողների ռեգիստրի և Սահմանային էլեկտրոնային կառավարման համակարգի ավտոմատացված փոխգործելիությունը (տես՝ 5.4), որն անձնական տվյալների մշակման ծավալի էական ընդլայնում է՝ առանց ուղեկցող երաշխիքների:

5.4. ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն փոփոխությունների սահմանադրաիրավական, միջազգային և ընթացակարգային գնահատումը

5.2 ենթաբաժնում նկարագրված փոփոխությունների իրավական գնահատման առանցքում են դրանց սահմանադրական հիմքը, համաչափությունը և տարբեր իրավիճակներում գտնվող քաղաքացիների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի հիմնավորվածությունը: ՀՀ

Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասը ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը վերապահում է ընտրության կամ հանրաքվեի օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներին, իսկ գործող սահմանադրական կարգավորումը առանձնացնում է ընտրական իրավունք չունեցող անձանց երկու խումբ՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձանց և դիտավորությամբ կատարված ծանր ու առանձնապես ծանր հանցանքների համար դատապարտված և պատիժը կրող անձանց: ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության 24.06.2026 թ. եզրակացությունը նախագծերի փաթեթի վերաբերյալ բարձրացրել է Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 48-րդ և 78-րդ հոդվածների հետ համապատասխանության հարցեր՝ մասնավորապես շեմի փաստական հիմնավորման, համաչափության և բացառությունների տարբերակված շրջանակի տեսանկյունից: Տասնմեկ հասարակական կազմակերպությունների և ընտրական փորձագետի համատեղ հայտարարությունը ևս ներկայացրել է քննադատական գնահատական՝ հղում կատարելով, ի թիվս այլ աղբյուրների, ՄԻԵԴ-ի Shindler v. the United Kingdom գործին, Մոնտենեգրոյի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գնահատականներին և Կանադայի Գերագույն դատարանի Frank v. Canada (2019) որոշմանը: Այս աղբյուրները ներկայացնում են փոփոխությունների իրավաչափության վերաբերյալ մասնագիտական և քաղաքացիական հասարակության գնահատականներ, մինչդեռ վերջնական սահմանադրական գնահատականը պատկանում է իրավասու սահմանադրական վերահսկողության մարմնին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՉԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԵՐԿՐԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԲԱՑԱՐՁԱԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՄԻԵԴ-Ի ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅՍ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ Է ՎԵՐԱՊԱՀՈՒՄ (ՏԵ�common, ՕՐԻՆԱԿ, SITAROPOULOS AND GIAKOUMOPOULOS V. GREECE և SHINDLER V. THE UNITED KINGDOM ԳՈՐԾԵՐԸ): ՀԵՏԱԶՈՏԱԲԱՐ, 366/730 ՕՐՎԱ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ԳՆԱՀԱՏՎԻ ՈՉ ԹԵ ԱՅՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՈՎ, ՈՐ ՅԱՆԿԱՑԱԾ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՓԱՍՏԱՑԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ ԻՆՔՆԻՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է, ԱՅԼ ԴՐԱ ԻՐԱՎԱՉԱՓ ՆՊԱՏԱԿԻ, ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ, ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԿԱ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ:

Ընթացակարգային տեսանկյունից գնահատման առանձին ուղղություն է ընտրական օրենսդրության կայունությունը: Նախագծերի փաթեթը Ազգային ժողովում քննարկվել է կարճ ժամկետներում և ընդգրկվել արտահերթ նստաշրջանի օրակարգում, իսկ առաջին և երկրորդ ընթերցումների միջև կիրառվել է արագացված ընթացակարգ: Վենետիկի հանձնաժողովի՝ ընտրական իրավունքի կայունության վերաբերյալ մոտեցումը նախատեսում է, որ ընտրական իրավունքի հիմնարար տարրերը, որպես ընդհանուր կանոն, չպետք է փոփոխվեն ընտրություններին նախորդող մեկ տարվա ընթացքում՝ միաժամանակ ճանաչելով որոշ բացառություններ, այդ թվում՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցնող լայն համաձայնությամբ փոփոխությունների և պարտադիր դատական կամ միջազգային որոշումների իրականացման համար: Հետևաբար ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն օրենքների գնահատման համար էական են ոչ միայն փոփոխությունների բովանդակությունը, այլև դրանց ընդունման ժամանակը, հիմնավորման բավարարությունը, շահագրգիռ կողմերի

մասնակցության հնարավորությունը և նոր կանոններին նախապատրաստվելու համար տրամադրված ժամանակը: Ընտրողների ռեգիստրի և սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի փոխգործելիությունը լրացուցիչ պահանջում է գնահատել նաև անձնական տվյալների մշակման նպատակի, ծավալի, ճշգրտության, վիճարկման և վերահսկողության երաշխիքները:

Առանձին գնահատման կարիք ունի նաև օրենքով նախատեսված բացառությունների շրջանակը: ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն օրենքները փաստացի գտնվելու պահանջից բացառություն են նախատեսում հանրային ծառայողի՝ ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու, դիվանագիտական ծառայություն անցնող անձի ընտանիքի անդամի՝ նրա հետ արտերկրում բնակվելու և արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության դեպքերի համար: Միաժամանակ, բացառությունների շրջանակում չեն ներառվել այլ օբյեկտիվ պատճառներով ժամանակավորապես արտերկրում գտնվող քաղաքացիների մի շարք խմբեր, օրինակ՝ երկարատև բուժման, արտերկրում աշխատանքի կամ ընտանիքի անդամի խնամքի պատճառով բացակայող անձինք: Սա առաջացնում է հարց՝ **արդյոք համադրելի իրավիճակներում գտնվող քաղաքացիների նկատմամբ տարբերակված մոտեցումն ունի բավարար օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում և համապատասխանում է հավասարության ու համաչափության պահանջներին:** Հետևաբար կարգավորման գնահատման շրջանակում անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն 366/730 օրվա շեմի հիմնավորվածությունը, այլև բացառությունների գործող շրջանակի բավարարությունն ու հնարավոր վերանայման անհրաժեշտությունը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 2026 Թ. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԵԼ Է ՆԱԵՎ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ի ԿՈՂՄԻՑ: ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆՇՎԵԼ Է, ՈՐ 2026 Թ. ԱՎԵԼԻ ՎԱՂ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ: ԹԵԵՎ ԱՅԴ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՊԻ-1368 և ՊԻ-1368.1 ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻՆ, ԱՅՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԴԳԾՈՒՄ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

5.5. Արտերկրում գտնվող քաղաքացիների քվեարկության բացը

Հայաստանի գործող ընտրական համակարգը արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների մեծամասնության համար չի նախատեսում արտերկրից քվեարկելու ընդհանուր մեխանիզմ: Միաժամանակ, Ընտրական օրենսգիրքը սահմանափակ կատեգորիաների համար նախատեսում է էլեկտրոնային քվեարկության հնարավորություն, այդ թվում՝ արտերկրում դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ բնակվող՝ ընտրելու իրավունք ունեցող ընտանիքի անդամների համար: Այլ ընտրողների համար քվեարկություն դիվանագիտական ներկայացուցչություններում կամ փոստով նախատեսված չէ, և իրավունքի իրացումը փաստացի պայմանավորված է քվեարկության օրը ՀՀ տարածքում գտնվելով: Հաշվի առնելով աշխատանքային միգրացիայի մասշտաբները՝ սա ընտրական

իրավունքի իրացման ամենամեծ չլուծված հարցերից է: Նոր կարգավորումը արտերկրում երկարաժամկետ գտնված քաղաքացիների մի մասի համար կարող է հանգեցնել ընտրելու իրավունքի գործնական իրացման անհնարինության, եթե նրանք չեն բավարարում 366/730 օրվա փաստացի գտնվելու պահանջը և չեն ընդգրկվում օրենքով նախատեսված բացառությունների շրջանակում: Առանձին գնահատման կարիք ունի նաև այն հարցը, թե ինչպես է այդ պահանջը փոխազդում էլեկտրոնային քվեարկության գործող հատուկ ռեժիմի հետ: Խնդրի ներքին արտացոլումն արձանագրվել է նաև մարզային մակարդակում. Տավուշում առնվազն 10 շահառու բարձրացրել է հաշվառման վայրի և փաստացի գտնվելու վայրի անհամապատասխանության պայմաններում քվեարկելու հարցը: Եթե անգամ երկրի ներսում այդ անհամապատասխանությունն այսօր իրացման դժվարություններ է ստեղծում, ապա **«փաստացի գտնվելու»** օրերի հաշվարկի վրա հիմնված համակարգը կարող է բազմապատկել վիճահարույց դեպքերը՝ առանց հասանելի լուծման մեխանիզմի:

Այս խնդրի գնահատման համար վերաբերելի են նաև Եվրոպայի խորհրդի չափանիշները: Դրանք պետություններին չեն պարտավորեցնում ներդնել արտերկրից քվեարկություն (տե՛ս 5.4), սակայն հետևողականորեն խրախուսում են այն: Վենետիկի հանձնաժողովի «Արտերկրում քվեարկության մասին» զեկույցը (CDL-AD(2011)022) պետություններին առաջարկում է դրական մոտեցում որդեգրել արտերկրում բնակվող քաղաքացիների ընտրելու իրավունքի նկատմամբ: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 1459 (2005) բանաձևի համաձայն՝ անդամ պետությունները պետք է իրենց՝ արտերկրում բնակվող քաղաքացիներին հնարավորություն տան քվեարկելու համապետական ընտրություններում. բանաձևը նաև կոչ է անում ընտրական իրավունք տրամադրել բոլոր քաղաքացիներին՝ առանց բնակության պահանջներ սահմանելու, և դյուրացնել այդ իրավունքի իրացումը փոստային և (կամ) հյուպատոսական քվեարկության միջոցով: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2017)5 հանձնարարականը սահմանում է անվտանգ և հասանելի էլեկտրոնային քվեարկության չափանիշները: Վենետիկի հանձնաժողովի զեկույցը նաև տարբերակում է արտերկրում գտնվող քաղաքացիների երեք խումբ՝ քվեարկության օրը գործերով կամ անձնական պատճառներով արտերկրում գտնվողներ, ուսման կամ աշխատանքի նպատակով արտերկրում ժամանակավորապես բնակվողներ և երկար ժամանակ արտերկրում բնակվողներ, որոնք կարող են ունենալ նաև երկքաղաքացիություն: Այս տարբերակումը վերաբերելի է Հայաստանի համար, որտեղ փաստացի գտնվելու պահանջից բացառությունները ներառում են արտերկրում ուսումնառությունը, սակայն ոչ արտերկրում աշխատանքը (տե՛ս 5.4): Համեմատական միտումը ևս ազատականացման ուղղությամբ է. Հունաստանը, Միացյալ Թագավորությունը և Կանադան, որոնց վերաբերում են 5.4 ենթաբաժնում հիշատակված գործերը, վերջին տարիներին վերանայել են իրենց սահմանափակող կարգավորումները և ընդլայնել արտերկրում բնակվող քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու հնարավորությունները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ. ՄՈԼԴՈՎԱՅԻ ԴԱՍԵՐԸ

6.1. ՔՀԿ-ների կոալիցիոն մոդելը (CALC) և ինստիտուցիոնալ երկխոսությունը

CSO Meter-ի տարածաշրջանային տվյալների համաձայն՝ 2023 թ. Մոլդովայում գրանցված էր 12,524 քաղաքացիական հասարակության կազմակերպություն (որից ակտիվ է շուրջ 25%-ը)՝ 10,000 բնակչի հաշվով մոտ 50 կազմակերպություն, իսկ Հայաստանում՝ 7,998: Մոլդովական ՔՀԿ-ների շուրջ 80%-ը գործում է Քիշնևում և կենտրոնական շրջանում, ինչը, ինչպես և Հայաստանում, համայնքային ծածկույթի կառուցվածքային խնդիր է: CSO Meter Moldova 2025 զեկույցում քաղաքացիական հասարակության գործունեության միջավայրի ընդհանուր գնահատականը կազմել է 4.8/7, օրենսդրության գնահատականը՝ 5.1, իսկ պրակտիկայինը՝ 4.4: Ֆինանսական կայունության առումով ֆինանսավորման շուրջ 70%-ն արտաքին դոնորական է, ծառայությունների մատուցումից եկամուտը տարեկան շուրջ 50 մլն եվրո է, իսկ եկամտահարկի 2%-ի փոխանցման մեխանիզմով ՔՀԿ-ներին հասնում է շուրջ 400 հազար եվրո: Մոլդովայի կառավարությունն այս կախվածությունը փորձում է հասցեագրել «Քաղաքացիական հասարակության զարգացման ծրագիր 2024-2027»-ով (հանրային ֆինանսավորման մեխանիզմ, սոցիալական պատվիրակում, նվիրատվությունների հարկային արտոնություններ):

Սահմանափակ ռեսուրսների և աշխարհագրորեն կենտրոնացված ՔՀԿ դաշտի պայմաններում կոալիցիոն մոդելը դարձել է ընտրական բարեվարքության ոլորտում աշխատող մոլդովական ՔՀԿ-ների ռազմավարական ընտրությունը, քանի որ մեկ ձայնով հանդես գալը և ջանքերի համակարգումը գործնական անհրաժեշտություն է: «Ազատ և արդար ընտրությունների քաղաքացիական կոալիցիան» (CALC) 2005 թ. հիմնադրված մշտական, կամավոր միավորում է (2022 թ.՝ 36, 2024 և 2026 թթ.՝ 39 անդամ կազմակերպություն), որը համախմբում է ընտրական գործընթացի ամբողջականության, շահերի պաշտպանության և ընտրությունների դիտարկման ուղղություններով աշխատող կազմակերպություններին: Կոալիցիայի գործունեությունը կանոնակարգվում է Կանոնակարգով (անդամության կարգ, անդամների իրավունքներ ու պարտականություններ, Խորհրդի և Քարտուղարության պատասխանատվություն): 2018 թվականից Քարտուղարության դերը ստանձնել է 2000 թ. հիմնադրված ADEPT-ը, որը Մոլդովայում քաղաքական կուսակցությունների և ընտրական գործընթացների վերաբերյալ ձևավորել է երկարաժամկետ մասնագիտական փորձ և ինստիտուցիոնալ հիշողություն:

2025 թ. գործունեության հաշվետվության համաձայն՝ Կոալիցիան գործել է որպես միասնական կառույց՝ արագ արձագանքելով ընտրական զարգացումներին և մասնագիտական փորձագիտություն տրամադրելով ընտրական գործընթացի հիմնական փուլերում.



Կոալիցիայի կայունությանը նպաստել են անդամակցության աստիճանական ընդլայնումը, ներքին կառավարման պարբերաբար և կանոնավոր գործընթացները, ընտրությունների միջև գործունեության շարունակականությունը, անդամների միջև փոխլրացնող մասնագիտական փորձառությունը, որոշումների կայացման թափանցիկությունը և ընտրական փուլերի միջև ինստիտուցիոնալ հիշողության պահպանումը: Հայաստանի համար Մոլդովայի փորձը կարող է դիտարկվել ոչ թե որպես ուղղակի կրկնօրինակման մոդել, այլ որպես օրինակ, թե ինչպես է ՔՀԿ-ների երկարաժամկետ համակարգումը վերածվում ինստիտուցիոնալ կարողության՝ պահպանելով փորձագիտական հիշողությունը և ապահովելով ներգրավվածություն ընտրական ցիկլի բոլոր փուլերում:

Մոլդովայի փորձի մեկ այլ կարևոր բաղադրիչ է ՔՀԿ-ների և պետական մարմինների միջև կառուցակարգված երկխոսության հարթակների ձևավորումը: ADEPT-ի և Promo-LEX-ի կողմից CALC-ի շրջանակում 2025 և 2026 թվականներին կազմակերպված **Ընտրական համաժողովները** համախմբել են ԿԸՀ-ի, խորհրդարանի, քաղաքական ուժերի, փորձագիտական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ ընտրություններից հետո արձանագրված խնդիրների, ընտրական օրենսդրության, ընտրական գործընթացի բարեվարքության և հետագա բարեփոխումների ուղղությունների համատեղ քննարկման համար:

ADEPT-ի վերլուծության համաձայն՝ Ֆորումը ձևավորվել է որպես արձագանք ընտրական ռիսկերի բնույթի փոփոխությանը: 2023 թ. սկսված ընտրական ցիկլի ընթացքում (ընտրություններ Գագաուզիայի ինքնավար տարածքային միավորում, համընդհանուր տեղական ընտրություններ, 2024 թ. նախագահական ընտրություններ և եվրաինտեգրման վերաբերյալ սահմանադրական հանրաքվե) արտաքին միջամտությունը, այդ թվում՝ ընտրությունների առանձին մասնակիցների ապօրինի ֆինանսավորումն արտերկրից և առցանց հարթակների օգտագործումը արտաքին դերակատարների համար նախընտրելի թեկնածուներին առաջ մղելու նպատակով, իսկ հետագայում նաև արտերկրում քվեարկությունը սահմանափակելու նախաձեռնությունը (տե՛ս 6.3) CALC-ի անդամ կազմակերպություններին հանգեցրել են այն եզրակացության, որ հետընտրական վերլուծությունը պետք է լրացվի ռիսկերի կանխատեսմամբ ու նվազեցմամբ: Ֆորումը, որը պարբերաբար համախմբում է CALC-ին, ԿԸՀ-ին, քաղաքական կուսակցություններին, պետական կառույցներին և միջազգային կազմակերպություններին, ծառայում է երեք նպատակի. (1) ընտրական գործընթացի գնահատում խոշոր ընտրություններից անմիջապես հետո՝ անկախ դիտորդական առաքելությունների արդյունքների ներկայացմամբ և Ընտրական օրենսգրքի բացերի ու կանոնների կամայական կիրառման ռիսկերի քննարկմամբ, (2) բարեվարքության խթանում և նոր ի հայտ եկող ռիսկերին արձագանքում՝ ներառյալ քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ինչպես նաև ապատեղեկատվությանը, տեղեկատվական մանիպուլյացիային և արտաքին միջամտությանը հակազդելու ուղիները, (3) ներառում և երկխոսություն՝ թերներկայացված խմբերի, երիտասարդների և արտերկրում քվեարկող քաղաքացիների համար համընդհանուր ընտրական իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող միջոցների խթանմամբ և չեզոք հարթակի տրամադրմամբ, որտեղ իշխանությունը, ընդդիմությունը և միջազգային գործընկերները կարող են տեխնիկական համաձայնության գալ բոլոր մասնակիցների համար արդար կանոնների շուրջ:

ՖՈՐՈՒՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՄԵՋ ՉԷ. ԴՐԱ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԾԱՌԱՅԵԼ ԿՈՆԿՐԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔ: ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ, 2026 Թ. ԸՆՏՐԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ADEPT-Ը ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՔԱՂԱՔԱԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ:

Այս փորձը ցույց է տալիս, որ ՔՀԿ-ների շարունակական մասնակցությունը կարող է ինստիտուցիոնալացվել ոչ միայն կոալիցիոն համագործակցության, այլև պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև պարբերական, կառուցակարգված երկխոսության միջոցով՝ ապահովելով ընտրական գործընթացում վերհանված խնդիրների փոխանցումը հետընտրական բարեփոխումների օրակարգ:

6.2. Ապատեղեկատվության չափման և արձագանքման մեթոդաբանական դասեր

Մոլդովայի 2024-2025 թթ. ընտրական գործընթացների փորձը ցույց է տալիս, որ ապատեղեկատվությանն արձագանքելու արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն առանձին նախաձեռնություններով, այլև մշտադիտարկման, ինստիտուցիոնալ

համագործակցության և տվյալների համադրման մեխանիզմներով: CALC-ը ապատեղեկատվությունը դիտարկում է ոչ միայն որպես հաղորդակցության մարտահրավեր, այլև որպես մշտադիտարկման ենթակա երևույթ՝ համադրելով երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդությունը, մեդիայի և սոցիալական ցանցերի մոնիտորինգը և թեմատիկ վերլուծությունները: Նման մոտեցումը թույլ է տալիս բացահայտել ոչ միայն առանձին դեպքեր, այլև ժամանակի ընթացքում կրկնվող միտումներն ու առավել խոցելի թեմաները: Մոլդովայի փորձը նաև ցույց է տալիս, որ մոնիթորինգը պետք է ներառի համակարգված վարքագծի, ներգրավված դերակատարների, հաղորդակցության ուղիների և տեղեկատվության տարածման ու ուժեղացման օրինաչափությունների ուսումնասիրություն, ինչպես նաև դրանց կապը ընտրական գործընթացի ամբողջականությանը սպառնացող այլ ռիսկերի հետ, և ոչ թե միայն կենտրոնանալ առանձին տեղեկատվական նյութերի ճշգրտության գնահատման վրա:



Մոլդովայում իրականացված մշտադիտարկման նախաձեռնությունները ցույց են տալիս, որ ընտրական տեղեկատվական միջավայրի հիմնական մարտահրավերներն են ընտրական գործընթացների նկատմամբ վստահության նվազումը, ընտրական ընթացակարգերի վերաբերյալ ոչ ճշգրիտ կամ մոլորեցնող տեղեկությունների տարածումը, հանրային դիսկուրսի բևեռացումը և հավաստի աղբյուրների տարբերակման դժվարությունը. դրանք համահունչ են Հայաստանի մարզերում արձանագրված դիտարկումներին (տե՛ս 3.2): Բազմաշահառու համագործակցության առումով CALC-ը պարբերաբար փոխգործակցում է ԿԸՀ-ի, Խորհրդարանի, Աուդիովիզուալ խորհրդի և այլ պետական մարմինների հետ՝ ներկայացնելով համատեղ դիրքորոշումներ և մասնակցելով խորհրդակցություններին: Այսպիսով, Մոլդովայի փորձը Հայաստանի համար ոչ թե պատրաստի լուծումների հավաքածու է, այլ մեթոդաբանական հղում, որը հիմնված է երեք փոխլրացնող տարրի վրա՝ շարունակական մոնիտորինգ, կոալիցիոն համագործակցություն և պետական մարմինների հետ կառուցվածքային երկխոսություն:

6.3. Իրավական և ինստիտուցիոնալ դասեր

Մոլդովայի փորձից ընտրական իրավունքի իրացման, ընտրական վարչարարության և օրենսդրական կայունության տեսանկյունից Հայաստանի համար վերաբերելի են հետևյալ հիմնական դասերը.


1 ***ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԵՎ ՏՎՅԱԼԱՀԵՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ:***

Մոլդովայում արտերկրում գտնվող քաղաքացիների ընտրական մասնակցության հնարավորությունները տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվել են՝ արտերկրյա ընտրատեղամասերի ցանցի զարգացման և այլընտրանքային քվեարկության

մեխանիզմների ներդրման միջոցով: 2025 թ. խորհրդարանական ընտրությունների համար ԿԸՀ-ն արտերկրում կազմակերպել է 301 ընտրական տեղամաս, որոնցից 4-ը նախատեսված էին փոստային քվեարկության համար: Արտերկրյա տեղամասերի ստեղծման հիմնական չափանիշներից են նախորդ երեք ընտրությունների մասնակցության տվյալները, քաղաքացիների կամավոր նախնական գրանցումը և արտաքին գործերի մարմինների տվյալները քաղաքացիների թվի ու աշխարհագրական տեղաբաշխման վերաբերյալ: Նախնական գրանցումը սովորական արտերկրյա տեղամասում քվեարկելու իրավունքի նախապայման չէ և ծառայում է կազմակերպչական պլանավորմանը:

Այս ընդլայնումը եղել է աստիճանական և օրենսդրորեն ամրագրված: 1994–2009 թթ. արտերկրում քվեարկությունը հնարավոր էր միայն Մոլդովայի դիվանագիտական ներկայացուցչությունների տարածքում: Եվրոպայի խորհրդի հետ խորհրդակցություններից հետո 2010 թ. հունիսի 18-ի թիվ 119 օրենքով հնարավոր դարձավ ընդունող պետության համաձայնությամբ ընտրատեղամասեր բացել նաև դիվանագիտական ներկայացուցչություններից և հյուպատոսական հիմնարկներից դուրս՝ արտերկրում գտնվող ընտրողների նախնական գրանցման հիման վրա: 2022 թ. ընդունված Ընտրական օրենսգիրքը (39-րդ հոդված) պահպանել է այս մոտեցումը և ավելացրել թվային չափանիշ. ընտրատեղամասեր կարող են ստեղծվել մեկ կամ մի քանի բնակավայրի համար, որտեղ ժամանակավորապես կամ մշտապես բնակվում է Մոլդովայի առնվազն 500 ընտրող՝ ԿԸՀ-ի որոշմամբ, այն բանից հետո, երբ Արտաքին գործերի նախարարությունը հաստատել է ընդունող պետության համաձայնությունը և կազմակերպչական իրագործելիությունը: Այս ընթացքում զգալիորեն աճել են ինչպես արտերկրյա ընտրատեղամասերի, այնպես էլ դրանցում քվեարկող քաղաքացիների թիվը (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Մոլդովայի Հանրապետության քաղաքացիների քվեարկությունն արտերկրում, 1994–2025 թթ.



Աղբյուր՝ ADEPT ասոցիացիա, alegeri.md: Գիծը (ձախ առանցք, «Alegători»)՝ ընտրողների թիվ, սյուները (աջ առանցք, «Secții de votare»)՝ ընտրատեղամասերի թիվ: Գծի ուղղահայաց հատվածները համապատասխանում են 2016, 2020 և 2024 թթ. նախագահական ընտրությունների առաջին և երկրորդ փուլերին:

Այս փորձը ցույց է տալիս, որ արտերկրում ընտրական իրավունքի գործնական իրացման հնարավորությունները կարող են զարգացվել աստիճանաբար՝ ընտրողների թվի, աշխարհագրական բաշխման, կազմակերպչական կարողությունների և անվտանգության վերաբերյալ տվյալների հիման վրա: Միաժամանակ, Մոլդովայի փորձը կարևոր է նաև այն

առումով, որ արտերկրում գտնվելը կամ մշտապես բնակվելը ինքնին չի վերացնում քաղաքացու ընտրական իրավունքը, իսկ արտերկրյա քվեարկության մեխանիզմները նախատեսված են այդ իրավունքի գործնական իրացումն ապահովելու համար:

2 ՁԱՅՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ:

Մոլդովայի փորձը ներառում է նաև հակառակ ուղղությամբ շարժվելու փորձ: 2025 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Կոմունիստների և սոցիալիստների բլոկի (BCS) մի խումբ պատգամավորներ գրանցել են օրենքի նախագիծ, որով առաջարկվում էր արտերկրում քվեարկությունը պայմանավորել Մոլդովայի դիվանագիտական ներկայացուցչություններում հյուպատոսական հաշվառմամբ, այդպիսի հաշվառում չունեցող քաղաքացիներին չընդգրկել ընտրողների ցուցակներում, վերացնել ժամկետն անցած անձը հաստատող փաստաթղթերով քվեարկելու հնարավորությունը, ինչպես նաև արտերկրում տրված ձայները հաշվել առանձին և կշռել երկրի ներսում մասնակցության մակարդակից կախված գործակցով, որպեսզի դրանք ուղղակիորեն չազդեն խորհրդարանական ընտրությունների վերջնական արդյունքի վրա: Նախագծի հեղինակներն այն ներկայացնում էին որպես սփյուռքի իրավունքների և երկրում բնակվող քաղաքացիների շահերի «հավասարակշռում» և հղում էին կատարում ՄԻԵԴ-ի Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece գործով վճռին:

ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՐԱՆՑՎԱԾ 2025 Թ. ՄԱՐՏԻ 28-ԻՆ՝ ԹԻՎ 102-ՈՎ) ՕՐԵՆՔ ՉԻ ԴԱՐՁԵԼ: 2025 Թ. ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ ՄՈԼԴՈՎԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ, ԻՍԿ 2025 Թ. ՀՈՒՆԻՍԻՆ CALC-Ը ԱՅՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՎ ԳՆԱՀԱՏԵԼ Է ՈՐՊԵՍ ԽՏՐԱԿԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՍՈՂ՝ ԿՈՉ ԱՆԵԼՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՐԺԵԼ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՆՀԻՄՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ: 2025 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ ԳՈՐԾՈՂ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ. ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԷԻՆ ՔՎԵԱՐԿԵԼ ՆԱԵՎ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑԱԾ ԱՆՁՆԱԳՐՈՎ, ԻՍԿ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄՆԱՑԵԼ Է ԿԱՄԱՎՈՐ:

CALC-ը նախաձեռնությանն արձագանքել է քննադատական վերլուծությամբ՝ ընտրողների հիմնարար իրավունքների և ժողովրդավարական գործընթացի ամբողջականության ու բնականոն գործունեության տեսանկյունից: Վերլուծության մեջ նշվում է, որ Մոլդովայի Սահմանադրության 38-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայն, և յուրաքանչյուր ձայն ունի հավասար իրավաբանական ուժ՝ անկախ այն հանգամանքից՝ տրվել է երկրի ներսում, թե արտերկրում: Մոլդովայում

ընտրողների գրանցումը պասիվ է, և Սահմանադրական դատարանը դեռևս 1998 թ. (1998 թ. մայիսի 27-ի թիվ 15 որոշում) հակասահմանադրական է ճանաչել ընտրողների ցուցակում ընդգրկվելը բնակության վայրի հաշվառմամբ պայմանավորելը, ուստի ցուցակում ընդգրկված չլինելը չի կարող քաղաքացուն զրկել ընտրելու իրավունքից. բնակության վայրի հաշվառում չունեցող քաղաքացիները կարող են քվեարկել լրացուցիչ ցուցակներով՝ քվեարկության օրը: Կրկնակի քվեարկության ռիսկը հասցեագրվում է տեխնիկական միջոցներով, այլ ոչ թե ընտրողների շրջանակի կրճատմամբ. «Ընտրություններ» պետական ավտոմատացված տեղեկատվական համակարգը և Ընտրողների պետական ռեգիստրն ապահովում են ընտրողի էլեկտրոնային նույնականացումը և մասնակցության գրանցումն իրական ժամանակում՝ անկախ քվեարկության վայրից: Միաժամանակ, վերլուծությունը հիշեցնում է, որ Սահմանադրական դատարանի 2016 թ. դեկտեմբերի 13-ի թիվ 34 որոշման համաձայն, որը հղում է կատարում ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, ընտրելու իրավունքը բացարձակ չէ, իսկ ձայների հավասարությունը չի ենթադրում երկրի ներսում և արտերկրում քվեարկության նույնական պայմաններ ապահովելու պարտականություն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ Է ԴՆՈՒՄ ՆԱԵՎ ԱՅՆ ԵԼԱԿԵՏԸ, ԹԵ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ «ՍՓՅՈՒՌՔՅԱՆ» ԸՆՏՐԱԶԱՆԳՎԱԾ: ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԵՐՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՎ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ Է ԳՏՆՎՈՒՄ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՇՈՒՐՋ 1.1 ՄԻԼԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ, ՍԱԿԱՅՆ ԱՌԿԱ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՃՇԳՐԻՏ ՏԱՐԱՆՋԱՏԵԼ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԱՐԲԵՐԱԿԱԾ ԵՐԵՔ ԽՈՒՄԲԸ (ՏԵՍ 5.5). ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է, ՈՐ ՆՐԱՆՑ 80–90%-Ը ԱՐՏԵՐԿՐՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՄ ՈՒՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ, ԵՎ ՄԻԱՅՆ ՓՈՔՐ ՄԱՍՆ Է ՄՇՏԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՎԵԼ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ: ՀԵՏԵՎԱԲԱՐ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԵԿ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԽՈՒՄԲ ԴԻՏԱՐԿՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՎ ՆՐԱՆՑ ՁԱՅՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԿՇՌՎԵԼ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՎԵԼ, ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԿԱՆԴՐԱԴԱՌՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎՐԱ: ADEPT-Ը ՆԱԵՎ ՆԿԱՏՈՒՄ Է, ՈՐ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԿԱՆՈՆ, ԿԱԽՎԱԾ ԵՆ ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐԱԾ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:

3 *ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ:*

Մոլդովայի ընտրական ամբողջականության համակարգը հիմնված է տարբեր մարմինների միջև գործառույթների բաշխման և համագործակցության վրա: Ընտրական օրենսգրքով ԿԸՀ-ն համագործակցում է պետական մի շարք կառույցների հետ՝ ընտրությունների անվտանգության,

ընտրողների ռեգիստրի, քաղաքական ֆինանսավորման վերահսկողության, կիբեռանվտանգության և այլ ուղղություններով:

2025 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ CALC-ի դիտարկմամբ՝ ԿԸՀ-ի, ոստիկանության, դատախազության, Աուդիովիզուալ խորհրդի և Անվտանգության ու հետախուզության ծառայության միջև համակարգումն առավել արդյունավետ է դարձել: Միաժամանակ արձանագրվել են ընտրական կոռուպցիայի առավել բարդ և դժվար փաստաթղթավորվող դրսևորումներ՝ բողոքի ակցիաների մասնակիցների վճարովի մոբիլիզացիա, համակարգման նպատակով ծածկագրված հաղորդագրությունների հավելվածների օգտագործում, ոչ թափանցիկ ֆինանսական փոխանցումներ, մոդելավորված վճարումներ և անձնական տվյալների ապօրինի հավաքագրում:

ԱՅՍ ՓՈՐՁԻՑ ԲԽՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՄԻԱՅՆ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՆ Է: ԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՀԱՄԱԴՐԵԼ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՆԱԽԱՊԵՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՁԵԿՈՒՄԸ: ՆՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ Է ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՂԻ ԿԱՄՔԻ ՎՐԱ ԱՊՕՐԻՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ԱԿՆՀԱՅՏ Է:

4 *ԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ:*

Մոլդովայում ԿԸՀ-ի համակարգում գործող Ընտրական ոլորտում շարունակական ուսուցման կենտրոնը (CICDE) ընտրական մարմինների անդամների պատրաստումն ու սերտիֆիկացումը կազմակերպում է որպես շարունակական մասնագիտական գործընթաց: Ընտրական մարմինների տարբեր մակարդակների անդամների համար համապատասխան որակավորման վկայական ունենալը գործող համակարգի մաս է, իսկ CICDE-ն կազմակերպում է նաև ուսուցում, մասնագիտացում, առկա և առցանց քննություններ ու մեթոդական աջակցություն:

Այս մոդելի առանձնահատկությունն այն է, որ մասնագիտական պատրաստումը չի սահմանափակվում միայն կոնկրետ ընտրությունից անմիջապես առաջ իրականացվող դասընթացներով, այլ ձևավորում է ընտրական վարչարարության շարունակական մասնագիտական զարգացման ինստիտուցիոնալ համակարգ: Այն կարող է դիտարկվել Հայաստանի գործող ուսուցման և որակավորման համակարգի հետագա զարգացման համեմատական օրինակ:

5 ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:

CALC-ի՝ 2025 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ գնահատմամբ՝ ընտրությունների ամսաթիվը սահմանելուց հետո Ընտրական օրենսգրքում և հարակից օրենսդրությունում կատարված էական փոփոխությունները բացասաբար են անդրադարձել իրավական շրջանակի կայունության վրա, նույնիսկ այն դեպքում, երբ փոփոխությունների մի մասը նպատակ ուներ ուժեղացնել ընտրական կոռուպցիայի և ապօրինի ֆինանսավորման դեմ գործիքները:

ՄՈԼԴՈՎԱՅԻ ՓՈՐՁԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՊԵՏՔ Է ԴԻՏԱՐԿՎԵՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ: ԸՆՏՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ ԿԱՄ ԻՐԱՎԱԿԻՐԱՌՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԵՎՍ ԿԱՐԵՎՈՐ Է ԱՊԱՀՈՎԵԼ ԲԱՎԱՐԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԱՆԱԿ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն բաժնի առաջարկությունները հիմնված են քաղաքականության համառոտագրում ներկայացված մարզային տվյալների, իրավական վերլուծության և Մոլդովայի համեմատական փորձի վրա և ընդգրկում են երեք փոխկապակցված ուղղություն՝ քաղաքացիական մասնակցություն, ապատեղեկատվություն և տեղեկատվական դիմակայունություն, ինչպես նաև իրավական շրջանակ և ընտրական իրավունքների իրացում: Դրանք նպատակահարմար է դիտարկել որպես ընտրական ամբողջ ցիկլն ընդգրկող փոխկապակցված քաղաքականության տարբերակներ և ինստիտուցիոնալ միջոցառումներ:



1 Մշակել և ընդունել «Ընտրողների կրթության և հանրային իրազեկման բազմամյա ռազմավարություն (2027-2030թթ.)

Պատասխանատու մարմին՝ ԿԸՀ

Չնայած Ընտրական օրենսգիրքը ԿԸՀ-ին վերապահում է ընտրությունների վերաբերյալ հանրային իրազեկման և ընտրողների համար ուսումնական նյութերի մշակման գործառույթներ, գործող կարգավորումները չեն նախատեսում ընտրողների կրթության երկարաժամկետ ռազմավարական պլանավորում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2026 թ. դիտարկմամբ՝ ԿԸՀ-ն իրականացրել է ընտրողների բավական ընդգրկուն կրթություն՝ ընտրողների գրանցման, ընտրական համակարգի և քվեարկության ընթացակարգերի վերաբերյալ՝ կիրառելով նաև մատչելի ձևաչափեր: Միաժամանակ դրանց տեսանելիությունը երկրի տարբեր հատվածներում եղել է անհավասար: Հետևաբար խնդիրը ոչ այնքան առանձին իրազեկման միջոցառումների բացակայությունն է, որքան դրանց երկարաժամկետ պլանավորման, տարածքային հավասար հասանելիության և միջընտրական շարունակականության ապահովումը: Հաշվի առնելով, որ մարզային տվյալները վկայում են մասնակցային մեխանիզմների վերաբերյալ սահմանափակ իրազեկվածության, ինչպես նաև երիտասարդների և խոցելի խմբերի շրջանում ընտրական գործընթացների նկատմամբ թերահավատության մասին, առաջարկվում է մշակել և ընդունել 2027-2030 թվականների ընտրողների կրթության և հանրային իրազեկման բազմամյա ռազմավարություն:



2 ԱՊԱՀՈՎԵԼ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՁԵԿՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Պատասխանատու մարմիններ՝ ԿԸՀ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Սույն համառոտագրում ամփոփված արդյունքները ցույց են տալիս, որ տեղահանված անձինք, տարեցները, առաջին անգամ քվեարկողները, ինչպես նաև մարզային և սահմանամերձ համայնքների բնակիչները բախվում են տարբեր բնույթի տեղեկատվական և գործնական խոչընդոտների, որոնք հնարավոր չէ արդյունավետ հասցեագրել միասնական հաղորդակցման գործիքներով: Այդ նպատակով առաջարկվում է մշակել թիրախային տեղեկատվական, իրավական աջակցության և գործնական ուղեցույցների փաթեթներ՝ համապատասխանեցված առանձին խմբերի կարիքներին և տեղեկատվության ընկալման առանձնահատկություններին:

ԴՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԱՌԵԼ՝

- ☑ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲՈՂՔԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅՈՒՆ,
- ☑ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
- ☑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՎԱՅՐՈՒՄ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍՑԵԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ,
- ☑ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ,
- ☑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ՏԱՐԵՑՆԵՐԻ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՅԼ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՈՉ ԹՎԱՅԻՆ և ՄԱՏՉԵԼԻ ՁԵՎԱՉԱՓԵՐԸ,
- ☑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ և ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ:

3 ՍՏԵՂԾԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՅՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄ ԸՆՏՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Պատասխանատու մարմիններ՝ ՀՀ կառավարություն, ԿԸՀ և այլ իրավասու պետական մարմիններ՝ մասնագիտացված ՔՀԿ-ների մասնակցությամբ

Հաշվի առնելով, որ ընտրական ոլորտում ՔՀԿ-ների կողմից իրականացվող կրթական, իրազեկման և իրավական աջակցության նախաձեռնությունները միջընտրական ժամանակահատվածում հաճախ կրում են ծրագրային բնույթ և կախված են առանձին ֆինանսավորման աղբյուրներից, նպատակահարմար է ձևավորել պետություն–ՔՀԿ համագործակցության շարունակական և թափանցիկ մեխանիզմ:

Մեխանիզմը կարող է նախատեսել մրցութային հիմքով պետական կամ այլ հանրային ֆինանսավորման տրամադրում ընտրական ոլորտում մասնագիտական փորձ ունեցող ՔՀԿ-ներին՝ կոնկրետ ծրագրերի իրականացման համար, այդ թվում՝

- ☑ **ընտրողների շարունակական կրթության և հանրային իրազեկման,**
- ☑ **խոցելի խմբերի համար թիրախավորված տեղեկատվական ծրագրերի,**
- ☑ **մարզային և սահմանամերձ համայնքներում ընտրական իրավաբանական աջակցության,**
- ☑ **մեդիագրագիտության և ապատեղեկատվության նկատմամբ դիմակայունության բարձրացման,**
- ☑ **քաղաքացիների մասնակցության և ընտրական իրավունքների իրացման վերաբերյալ կրթական ու գործնական ծրագրերի իրականացման համար**

Մրցութային ֆինանսավորման և համագործակցության պայմանները նպատակահարմար է կառուցել հրապարակային չափանիշների, մասնագիտական կարողությունների, աշխարհագրական ծածկույթի, թիրախային խմբերին հասանելիության և արդյունքների գնահատման հիման վրա՝ միաժամանակ պահպանելով ՔՀԿ-ների անկախությունը:

4 ՄՇԱԿԵԼ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼ «ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

Պատասխանատու մարմիններ՝ ԿԸՀ, իրավասու այլ պետական մարմիններ՝ ՔՀԿ-ների և մասնագիտական կառույցների

Քաղաքականության ամփոփագրի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ընտրական գործընթացների ընթացքում ապատեղեկատվության և տեղեկատվական ռիսկերի գնահատումը շարունակում է կրել հիմնականում ծրագրային և ժամանակավոր բնույթ: Միաժամանակ, Մոլդովայի CALC կոալիցիայի փորձը ևս հուշում է, որ մեդիայի և սոցիալական ցանցերի մշտադիտարկումը կարող է դիտարկվել որպես ընտրական ամբողջականության ապահովման կարևոր բաղադրիչ:

Այս համատեքստում առաջարկվում է ԿԸՀ-ի կողմից այլ իրավասու մարմինների հետ համագործակցությամբ, մշակել և հաստատել ընտրական գործընթացների տեղեկատվական միջավայրի մշտադիտարկման միասնական մեթոդաբանություն, որը կարող է կիրառվել ինչպես ընտրությունների ընթացքում, այնպես էլ միջընտրական ժամանակահատվածում:

Մեթոդաբանության մեջ անհրաժեշտ է հստակ սահմանել կեղծ տեղեկատվության (misinformation), ապատեղեկատվության (disinformation), իրականության չարամիտ տարածման (mal-information) և արտաքին տեղեկատվական մանիպուլյացիայի ու միջամտության (FIMI) հասկացությունները և դրանց տարբերակման չափանիշները: Մեթոդաբանությունը կարող է ներառել նաև տեղեկատվական ռիսկերի թափանցիկ դասակարգում, սոցիալական ցանցերի և առցանց լրատվամիջոցների մոնիթորինգի նվազագույն չափորոշիչներ, համակարգված վարքագծի և տեղեկատվության տարածման ու ուժեղացման օրինաչափությունների վերլուծություն, ընտրական գործընթացի շրջանակում տեղեկատվության մանիպուլյացիայի միտումների պարբերական քարտեզագրում, ռիսկերի գնահատման ցուցանիշներ և հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԿԱՏԱՌՈՒՄ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՆՊԱՍՏԻ ՏԱՐԲԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ՝ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՎ ՔՀԿ-ՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՆԿԱԽ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ: ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ԴԻՏԱՐԿՎԻ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԻՄՔ:

5 ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԾՐՋԱՆԱԿՈՒՄ ՁԵՎԱՎՈՐԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ/ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Պատասխանատու մարմին՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ԿԲՀ-ի, այլ իրավասու պետական մարմինների, ՔՀԿ-ների և մեդիա կազմակերպությունների մասնակցությամբ

Քաղաքականության ամփոփագրի արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական գործընթացներում տեղեկատվական մարտահրավերների արդյունավետ հասցեագրումը պահանջում է պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մեդիա կազմակերպությունների միջև շարունակական համագործակցություն: Մոլդովայի փորձը, մասնավորապես՝ CALC կոալիցիայի գործունեությունը, ևս հուշում է, որ բազմաշահառու համագործակցության հարթակները կարող են նպաստել տեղեկատվական ռիսկերի առավել վաղ բացահայտմանը և համակարգված արձագանքմանը:

Այս համատեքստում առաջարկվում է ձևավորել ընտրական գործընթացներին առնչվող մշտական բազմաշահառու աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբի գործունեությունը կարող է ներառել՝ ընտրական գործընթացներին առնչվող տեղեկատվական ռիսկերի պարբերական գնահատում, պետական մարմինների և ՔՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների ձևավորում, ընտրական ապատեղեկատվության վերաբերյալ տարեկան ամփոփ վերլուծությունների պատրաստում, ընտրական գործընթացներում տեղեկատվական դիմակայունության բարձրացմանն ուղղված առաջարկությունների մշակում: ՔՀԿ-ների և անկախ լրատվամիջոցների մասնակցությունը աշխատանքային խմբի գործունեությանը պետք է լրացնի, այլ ոչ թե փոխարինի նրանց կողմից անկախ մոնիթորինգի, շահերի պաշտպանության և հանրային վերահսկողության գործառույթների իրականացմանը:

ԱՅՍ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է: ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՁՈՒԳԱԿՑՎԻ ԱՆԿԱԽ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ, ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ ՓԱՍՏԱՐԿՎԱԾ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ և ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԵՐ ՀԱՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

6 ԱՊԱՀՈՎԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Պատասխանատու մարմիններ՝ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն և ԿԸՀ

Հաշվի առնելով 2026 թ. ընտրական օրենսդրական փոփոխությունների ընդունման ընթացակարգի վերաբերյալ սույն համառոտագրում ներկայացված դիտարկումները՝ նպատակահարմար է ընտրական և հանրաքվեի օրենսդրության հիմնարար տարրերին վերաբերող փոփոխությունների դեպքում առաջնորդվել իրավական կայունության, կանխատեսելիության, բավարար նախապատրաստման ժամանակի և շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցության սկզբունքներով:

Վենետիկի հանձնաժողովի մոտեցմամբ՝ ընտրական իրավունքի հիմնարար տարրերը, որպես ընդհանուր կանոն, չպետք է փոփոխվեն ընտրություններին նախորդող մեկ տարվա ընթացքում՝ հաշվի առնելով համապատասխան բացառությունները: Հանրաքվեների դեպքում ևս կիրառվում է հիմնարար կանոնների մեկ տարվա կայունության սկզբունքը. հաշվի առնելով, որ հանրաքվեի ամսաթիվը հաճախ մեկ տարի առաջ հայտնի չէ, Վենետիկի հանձնաժողովի վերանայված կանոնագիրքը շեշտադրում է նաև, որ հիմնարար փոփոխությունները, որպես ընդհանուր կանոն, չպետք է կիրառվեն դրանց ընդունմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում: Միաժամանակ, այս սկզբունքը նախատեսում է համապատասխան վերապահումներ, ուստի 2026 թ. փոփոխությունների ընդունման և 2027 թ. ակնկալվող հանրաքվեի միջև կարճ ժամանակահատվածի դեպքում ավելի ճշգրիտ է խոսել կայունության սկզբունքի հետ հնարավոր լարվածության և դրա կիրառելիության առանձին գնահատման անհրաժեշտության, այլ ոչ թե ինքնաբերաբար հաստատված խախտման մասին:

Մասնավորապես՝ 2027 թ. ակնկալվող սահմանադրական հանրաքվեին ընդառաջ նպատակահարմար է՝

- ☑ **հնարավորինս վաղ ավարտել հանրաքվեին մասնակցելու իրավունքի, ընտրողների ռեգիստրի և հանրաքվեի անցկացման այլ հիմնարար կանոնների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները,**
- ☑ **էական փոփոխությունները նախապես ենթարկել փաստական հիմնավորման և կարգավորման ազդեցության գնահատման,**
- ☑ **ապահովել ԿԸՀ-ի, ՄԻՊ-ի, ՔՀԿ-ների, քաղաքական ուժերի և փորձագիտական հանրության մասնակցությամբ լիարժեք հանրային քննարկումներ,**
- ☑ **սահմանադրական նշանակության կամ հիմնարար փոփոխությունների դեպքում դիտարկել Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագիտական կարծիք հայցելու հնարավորությունը:**

7

ՎԵՐԱՆԱՅԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ 366/730 ՕՐՎԱ ՓԱՍՏԱՑԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ, ՎԵՐԱՆԱՅԵԼ ԵՎ ԸՆԴԼԱՅՆԵԼ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՊԱՀՈՎԵԼ ՊԱՀԱՆՋԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ:

Պատասխանատու մարմիններ՝ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն, ԿԸՀ, ՀՀ ներքին գործերի նախարարություն և այլ իրավասու մարմիններ

ՀՕ-361-Ն և ՀՕ-362-Ն սահմանադրական օրենքներով Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեին մասնակցելու համար ներդրված՝ նախորդ 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվելու պահանջը նպատակահարմար է վերանայել՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները, ՄԻԵԴ-ի համապատասխան նախադեպային իրավունքը և համեմատական փորձը:

Վերանայման շրջանակում նպատակահարմար է դիտարկել՝ 366/730 օրվա շեմի փաստական հիմնավորումն ու համաչափությունը, պահանջի ազդեցությունը ընտրողների շրջանակի վրա, այդ թվում՝ դրա հետևանքով ընտրական իրավունքից դուրս մնացող քաղաքացիների քանակը և հիմնական խմբերը և արտերկրում բնակվող կամ ժամանակավորապես գտնվող քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման վրա պահանջի ազդեցությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերջին տասնամյակներին մի շարք եվրոպական պետություններում արտերկրում գտնվող քաղաքացիների ընտրական մասնակցության հնարավորությունների ընդլայնման համեմատական միտումը

Գործող բացառությունների բավարարությունը նպատակահարմար է գնահատել նաև համադրելի իրավիճակներում գտնվող, սակայն դրանց շրջանակից դուրս մնացող քաղաքացիների տեսանկյունից: Մասնավորապես, կարող է դիտարկվել բացառությունների շրջանակի ընդլայնումը այն անձանց նկատմամբ, որոնց Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր բացակայությունը պայմանավորված է արտերկրում աշխատանքով, երկարատև բուժմամբ, ընտանիքի անդամի խնամքով կամ այլ փաստաթղթավորվող օբյեկտիվ հանգամանքներով:

Քանի դեռ փաստացի գտնվելու պահանջը գործում է, սահմանահատումների վերաբերյալ տվյալների օգտագործումը ընտրողների ցուցակների ձևավորման համար պետք է ուղեկցվի իրավունքի արդյունավետ պաշտպանության հստակ մեխանիզմներով: Դրանք կարող են ներառել՝ փաստացի գտնվելու պահանջը չբավարարելու հիմքով ընտրողների ցուցակում չընդգրկված անձի ժամանակին և հասկանալի տեղեկացումը, սահմանահատումների տվյալների ստուգման և հնարավոր անճշտությունների ուղղման պարզ և մատչելի ընթացակարգ, մինչև քվեարկության օրը հասանելի արագացված վարչական և դատական պաշտպանության միջոցներ, վիճելի դեպքերում ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության համապատասխան ընթացակարգային լուծումներ և Ընտրողների ռեգիստրի

և սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի փոխգործելիության ընթացքում անձնական տվյալների մշակման նպատակի սահմանափակման, ճշգրտության, անվտանգության, վերահսկելիության և աուդիտելիության երաշխիքներ:

Վերանայման արդյունքներով կարող է քննարկվել 366/730 օրվա պահանջի, դրա շեմի, օրենքով նախատեսված բացառությունների շրջանակի և կիրառման պայմանների համապատասխան փոփոխության անհրաժեշտությունը:



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատասխանատու մարմիններ՝ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն, ԿԸՀ, ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ Սիյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և այլ շահագրգիռ մարմինների մասնակցությամբ:

Արտերկրում գտնվող՝ գործող օրենսդրությամբ ընտրելու կամ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընտրական իրավունքի գործնական իրացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով կարող է ուսումնասիրվել արտերկրից քվեարկության մեխանիզմների փուլային ներդրման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով սահմանափակ կատեգորիաների համար գործող էլեկտրոնային քվեարկության փորձը, ընտրական գործընթացի ամբողջականությունը, կազմակերպչական կարողությունները, ծախսերը, անվտանգությունը և հավասար հասանելիությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՏԱՐԿՎԵԼ՝

- ☑ **Վենետիկի հանձնաժողովի «Արտերկրում քվեարկության մասին» զեկույցի մոտեցմանը համահունչ՝ արտերկրում գտնվող քաղաքացիների խմբերի տարբերակումը (քվեարկության օրը կարճաժամկետ պատճառներով արտերկրում գտնվողներ, աշխատանքի կամ ուսման նպատակով ժամանակավորապես արտերկրում գտնվողներ և երկարաժամկետ հիմունքներով արտերկրում հաստատվածներ) և նրանց թվի ու աշխարհագրական տեղաբաշխման վերաբերյալ հավաստի տվյալների հավաքագրումը,**
- ☑ **ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում քվեարկության կազմակերպումը՝ պատշաճ նույնականացման և կրկնակի քվեարկությունը կանխող մեխանիզմներով,**
- ☑ **արտերկրում գտնվող ընտրողների կամավոր նախնական գրանցման համակարգի ներդրումը՝ ընտրողների հնարավոր թվի, տեղաբաշխման և կազմակերպչական կարիքների գնահատման նպատակով՝ առանց այն ընտրական իրավունքի իրացման ինքնուրույն նախապայման դարձնելու,**
- ☑ **անհրաժեշտության դեպքում դիվանագիտական ներկայացուցչություններից դուրս լրացուցիչ ընտրատեղամասերի ստեղծումը՝ ընտրողների**

աշխարհագրական կենտրոնացման, նախնական գրանցման տվյալների, հեռավորությունների և այլ օբյեկտիվ չափանիշների հիման վրա,

- ☑ **համապատասխան իրավական, տեխնիկական և անվտանգության երաշխիքների առկայության դեպքում այլընտրանքային քվեարկության մեխանիզմների սահմանափակ փորձարկումը:**

Որպես համեմատական օրինակ կարող է հաշվի առնվել Մոլդովայի փորձը, որտեղ արտերկրում գտնվող իրավասու քաղաքացիների համար գործում են արտերկրյա ընտրատեղամասեր և կամավոր նախնական գրանցման համակարգ, իսկ սահմանված երկրների դեպքում կիրառվում է նաև փոստային քվեարկություն: 2025 թ. խորհրդարանական ընտրությունների համար Մոլդովայի ԿԸՀ-ն ստեղծել էր 301 արտերկրյա ընտրատեղամաս, որոնցից 4-ը՝ փոստային քվեարկության համար: Մոլդովայի Ընտրական օրենսգրքի համաձայն՝ դիվանագիտական ներկայացուցչություններից դուրս ընտրատեղամասեր կարող են բացվել այն բնակավայրերի համար, որտեղ գտնվում է Մոլդովայի առնվազն 500 ընտրող, իսկ յուրաքանչյուր ձայնի եզակիությունն ապահովվում է Ընտրողների պետական ռեգիստրի միջոցով ընտրողների էլեկտրոնային նույնականացմամբ:

9 ՎԵՐԱՆԱՅԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՂ ՄՈԴԵԼԸ

Պատասխանատու մարմին՝ ԿԸՀ

Հաշվի առնելով Հայաստանում գործող՝ ԿԸՀ-ի կողմից կազմակերպվող պարբերական ուսուցման և որակավորման համակարգը, նպատակահարմար է ուսումնասիրել դրա հետագա զարգացման հնարավորությունը՝ այն առավել շարունակական և ինստիտուցիոնալացված մասնագիտական զարգացման համակարգի վերածելու ուղղությամբ:

Այդ շրջանակում կարող են դիտարկվել՝

պարբերական և շարունակական վերապատրաստման ծրագրերի զարգացումը,

առկա և առցանց ուսուցման ձևաչափերի համադրումը,

ուսուցման ծրագրերի պարբերական թարմացումը՝ օրենսդրական և տեխնոլոգիական փոփոխություններին համապատասխան,

մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման և գնահատման մեխանիզմների կատարելագործումը:

Որպես համեմատական ինստիտուցիոնալ օրինակ կարող է օգտագործվել Մոլդովայի Ընտրական ոլորտում շարունակական ուսուցման կենտրոնի (CICDE) փորձը՝ գնահատելով Հայաստանի գործող համակարգում նման շարունակական մասնագիտական զարգացման բաղադրիչների ներդրման նպատակահարմարությունը:

10 ԱՄՐԱՊՆԴԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱՎԵԿՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Պատասխանատու մարմիններ՝ ԿԸՀ, ՀՀ դատախազություն, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, ՀՀ ներքին գործերի նախարարություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով և այլ իրավասու մարմիններ

ODIHR-ը 2026-ին արձանագրել է ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ ու ակտիվ քննություններ, բայց նաև մտահոգություններ՝ իրավակիրառման ընտրողականության ընկալման մասին:

Հաշվի առնելով մարզային մակարդակում արձանագրված՝ նախընտրական «բարեգործության» և ընտրակաշառքի իրավական սահմանազատման վերաբերյալ հարցերը, ինչպես նաև Մոլդովայի փորձը՝ նպատակահարմար է ամրապնդել ընտրական, իրավապահ, կանխարգելիչ և վերահսկողական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և գործնական համակարգման մեխանիզմները: Մոլդովայի փորձը ցույց է տալիս, որ ընտրական կոռուպցիայի բարդացող և դժվար փաստաթղթավորվող դրսևորումները պահանջում են տարբեր իրավասու մարմինների համակարգված արձագանք՝ համադրելով կանխարգելումը, ֆինանսական վերահսկողությունը և իրավակիրառումը:

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ Է ՄՇԱԿԵԼ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԻ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ և ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ: ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՆ ԱՐԴԵՆ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԻՆՉԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԻՄՔ Է ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶ ՈՒ ՀԱՍԱՆԵԼԻ ԻՐԱՎԵԿՄԱՆ ՀԱՄԱՐ:

Նման պարզաբանումները պետք է ունենան տեղեկատվական և մեթոդական բնույթ և չկանխորոշեն իրավապահ մարմինների կամ դատարանների կողմից յուրաքանչյուր կոնկրետ դեպքով տրվող ինքնուրույն իրավական գնահատականը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարզային տվյալների, միջազգային փորձի և առկա քաղաքականությունների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում քաղաքացիական մասնակցության, ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության և տեղեկատվական դիմակայունության մարտահրավերները փոխկապակցված են և չեն կարող դիտարկվել մեկուսացված: Սեմինարների մասնակիցների դիտարկումները հուշում են, որ մասնակցության սահմանափակ մակարդակը կարող է պայմանավորված լինել ոչ միայն հետաքրքրվածության պակասով, այլև ինստիտուցիոնալ վստահության բացերով, մասնակցային մեխանիզմների մասին սահմանափակ իրազեկվածությամբ, երիտասարդների թերահավատությամբ և խոցելի խմբերի գործնական խոչընդոտներով, իսկ ապատեղեկատվությունը մասնակիցների դիտարկումներում զուգակցվում է արդեն իսկ առկա անվստահության հետ: Քաղաքացիական հասարակությունը շարունակում է կարևոր դեր ունենալ ընտրական գործընթացներում, սակայն, ըստ ուսումնասիրված աղբյուրների, նրա ջանքերը դեռևս հիմնականում կենտրոնացած են ընտրական ցիկլի ակտիվ փուլերի վրա և կրում են ծրագրային բնույթ:

Հայաստանի ընտրական բարեվարքության օրակարգը 2026-2027 թթ. համար ձևավորվում է երկու հակադիր տրամաբանության բախման դաշտում: Մի կողմից՝ մարզային իրավաբանական բացահայտումները հուշում են, որ ծառայությանը դիմած շահառուների համար ընտրական իրավունքի իրացման հիմնական խոչընդոտները ընթացակարգային մատչելիության և իրավական իրազեկվածության խնդիրներն են, որոնց լուծումը իրավունքի իրացման դյուրացումն է՝ իրավական աջակցությամբ և ինստիտուցիոնալ երկխոսությամբ: Մյուս կողմից՝ օրենսդրական դաշտում ի հայտ են գալիս ընտրողների շրջանակը նեղացնող նախաձեռնություններ, որոնք ընդունվել են արագացված օրենսդրական ընթացակարգով, ինչը սահմանափակել է լայն և ժամանակատար հանրային ու մասնագիտական քննարկման հնարավորությունը: 2026 թ. ընդունված փոփոխությունները, հատկապես՝ նախորդ 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում առնվազն 366 օր փաստացի գտնվելու պահանջը, առաջացնում են էական սահմանադրաիրավական և համաչափության հարցեր՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով ամրագրված ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքը: Միաժամանակ, մինչև իրավասու սահմանադրական վերահսկողության մարմնի կողմից հարցի վերջնական գնահատումը, դրանց՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ կատեգորիկ եզրակացությունը պետք է դիտարկել որպես իրավական դիրքորոշում, այլ ոչ հաստատված իրավական փաստ, իսկ միջազգային չափանիշների տեսանկյունից առկա են համաչափության և ընտրական իրավունքի անհարկի սահմանափակման ռիսկեր, որոնք պահանջում են առանձին գնահատում: Ընտրելու իրավունքը արտոնություն չէ, և ժողովրդավարական պետությունում կանխավարկածը ներառման օգտին է. Մոլդովայի փորձը հուշում է, որ բարեվարքության իրական մարտահրավերները կարող են հաղթահարվել թիրախային գործիքներով և ինստիտուցիոնալ դիմակայունությամբ, մինչդեռ չհիմնավորված կամ անհամաչափ մասնակցային սահմանափակումները կարող են բացասաբար ազդել ընտրական գործընթացի ներառականության, հանրային վստահության և արդյունքների լեգիտիմության ընկալման վրա:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՓՈՐՁԸ ՀՈՒՇՈՒՄ Է, ՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՑԻԿԼԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ ՈՉ ԹԵ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԱՅԼ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ, ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ: ՀԵՏԱԲԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐԸ ՈՉ ԹԵ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է, ԱՅԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՊԱՐԲԵՐԱԾՐՋԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ և ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ՍՈՒՅՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԻ ԵՐԵՔ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ Է ԴԻՏԱՐԿԵԼ ՈՐՊԵՍ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՎԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ, ՏԵՂԵԿԱՑՎԱԾ և ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ՝ 2026 Թ. ԸՆՏՐԱԿԱՆ ՑԻԿԼԻՑ ՄԻՆՉև 2027 Թ. ԱԿՆԿԱԼՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ և ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված՝ 05.07.1995 թ., 2015 թ. փոփոխություններով:
- «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-54-Ն, 25.05.2016 թ:
- «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-361-Ն, 03.07.2026 թ:
- «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-362-Ն, 03.07.2026 թ:
- «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-395-Ն, 16.07.2020 թ:
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-330-Ն, 24.03.2021 թ:
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 30.06.2022 թ. N 50-Ն որոշում՝ «Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ կազմակերպելու, անցկացնելու և որակավորում շնորհելու կարգը սահմանելու մասին»:

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն՝ «Դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում», հավանության է արժանացել ՀՀ անվտանգության խորհրդի 10.07.2020 թ. նիստում:
- Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգ և 2024–2026 թթ. գործողությունների ծրագիր, հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 27.12.2023 թ. N 1319-Լ որոշմամբ:

3. ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ, ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ և ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՀՀ Ազգային ժողով, Պ-1368-12.06.2026,01.07.2026-ՊԻ-011/0 և Պ-1368.1 նախագծերի փաթեթ, 2026 թ:
- ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչություն, եզրակացություն Պ-1368 և Պ-1368.1 նախագծերի վերաբերյալ, 24.06.2026 թ:
- Տասնմեկ հասարակական կազմակերպությունների և ընտրական փորձագետ Տ. Ղազարյանի համատեղ հայտարարություն Պ-1368 և Պ-1368.1 նախագծերի վերաբերյալ, հուլիս 2026 թ:

- **Մարզային ՔՀԿ-ների հաշվետվություններ՝ Գեղարքունիք, Շիրակ, Լոռի և Տավուշ, հուլիս 2026 թ:**
- **Ռեգիոնալ իրավական հաշվետվություններ՝ Գեղարքունիք, Շիրակ, Լոռի և Տավուշ, հուլիս 2026 թ:**

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ և ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- **Venice Commission, *Code of Good Practice in Electoral Matters*, CDL-AD(2002)023rev2-cor, 2002:**
- **Venice Commission, *Report on Out-of-Country Voting*, CDL-AD(2011)022, 2011:**
- **Venice Commission, *Revised Code of Good Practice on Referendums*, CDL-AD(2022)015, 2022:**
- **Venice Commission, *Revised Interpretative Declaration to the Code of Good Practice in Electoral Matters on the Stability of Electoral Law*, CDL-AD(2024)027, 2024:**
- **Parliamentary Assembly of the Council of Europe, *Resolution 1459 (2005): Abolition of Restrictions on the Right to Vote*, 24 June 2005:**
- **Committee of Ministers of the Council of Europe, *Recommendation CM/Rec(2017)5 on Standards for E-voting*, 2017:**
- **UN Human Rights Committee, *General Comment No. 25: The Right to Participate in Public Affairs, Voting Rights and the Right of Equal Access to Public Service*, 1996:**
- **Council of Europe, *Information Disorder: Toward an Interdisciplinary Framework for Research and Policy Making*, DGI(2017)09, 2017:**
- **European External Action Service (EEAS), *Information Integrity and Countering Foreign Information Manipulation & Interference (FIMI)*, 17 March 2026:**
- **ACE Electoral Knowledge Network, *The Electoral Cycle Approach*:**
- **ACE Electoral Knowledge Network, *Electoral Integrity*, 3rd ed., 2012:**
- **Garnett, Holly Ann, Toby S. James and Sofia Caal-Lam, *Perceptions of Electoral Integrity (PEI 11.0)*, Electoral Integrity Project, 2025:**
- **Economist Intelligence Unit, *Democracy Index 2024*, 2025:**

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

- **European Court of Human Rights, *Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece [GC]*, 2012:**
- **European Court of Human Rights, *Shindler v. the United Kingdom*, 2013:**
- **Supreme Court of Canada, *Frank v. Canada (Attorney General)*, 2019:**

6. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՆԵՐ

- **OSCE/ODIHR, *Republic of Armenia, Early Parliamentary Elections, 20 June 2021: Interim Report*, 2021:**
- **OSCE/ODIHR, *Republic of Armenia, Early Parliamentary Elections, 20 June 2021: Final Report*, 2021:**

- **OSCE/ODIHR, *Republic of Armenia, Parliamentary Elections, 7 June 2026: Statement of Preliminary Findings and Conclusions*, 8 June 2026:**
-

7. ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- **CSO Meter, *Moldova 2025 Country Report*, 2025:**
- **Coalition for Free and Fair Elections (CALC), *Statement on the Parliamentary Elections of 28 September 2025*, 2 October 2025:**
- **Coalition for Free and Fair Elections (CALC), *General Assembly of the Coalition for Free and Fair Elections: Review of the 2025 Electoral Year and Priorities for 2026*, 14 November 2025:**
- **ADEPT Association, *Voting Abroad in the Moldovan Elections: Pros and Cons*, May 2025:**
- **ADEPT Association, *Moldova Parliamentary Elections 2025: Polling Stations Abroad*, August 2025:**
- **ADEPT Association, *The Experience of Civil Society Organizations in the Republic of Moldova Regarding the Defense of Citizens' Electoral Rights and the Anticipation of Threats That Could Undermine Them*, analytical note prepared for the project, 2026:**
- **ADEPT Association, alegeri.md portal, *Votarea peste hotarele Republicii Moldova (Voting Abroad)*:**